

4(362)

25.02.2014

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիտաբար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՄԵՐ ԼԵՉՈՒՆ՝ ՄԵՐ ՏՈՒՆԸ

Հազարամյակներ շարունակ հայ ժողովրդի ինքնության գլխավոր պայմանը մայրենի լեզունն է եղել: Ազգի լեզուն նրա հավատն է, արժանապատվությունը, անցյալն ու ապագան: Հենց այս արժեքներով ենք դարձրել գոյատևել՝ հաճախ բախվելով այլ քաղաքակրթական արժեքների հետ: Այդ բախումները, ցավոք, ուղեկցվել են հայ էթնոսի համար ծանր կորուստներով, բայց թեկուզ այդպես էլ կարողացել ենք ՀԱՅ մնալ:

Այս համապատկերում փետրվարի 21-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ որպես Մայրենիի օր պաշտոնապես նշելը, թերևս, զուտ խորհրդանշական իմաստ ունի: Բնականաբար, ՅՈՒՆԵՍԿՕ-ն կարևոր նախաձեռնություն է ցուցաբերել՝ հիշեցնելով ամեն մի ժողովրդի համար մայրենի լեզվի անուրանալի դերի ու նշանակության մասին: Բայց չնոռանանք, որ դա վերաբերում է աշխարհի բոլոր ազգերին, և այս հիմքով չէ միայն, որ մայրենի լեզուն պետք է հատուկ գուրգուրանքի արժանանա հայերիս կողմից: Խորհրդային տարիներին, ընդհանուր պետության մեջ ռուսերենի գերակայության պայմաններում, կար լեզվի ուժացման վտանգ, որի մասին սակավ է խոսվել մեզ պարտադրված «ինտերնացիոնալ» հանդուրժողականության պատճառով: Եվ միայն ամենահամարձակներն են կարողացել ահագանգել այդ վտանգի հնարավոր հետևանքների մասին: Հիշենք Հովհաննես Ծիրազի հանրահայտ տողերը, որոնք կարելի է լեզվապահպանության յուրօրինակ հիմն անվանել. «Վառեք խոսքս ու կրակով այրեք բերանն այն հայոց, /Որ մայր լեզվի բերդ չեն դարձնում բերանն իրենց տղայոց: /Որ թաղում են հայոց տխրակն, այլոց հավքին կյանք տալիս, /Վառեք նրան, ում ծնունդով Մաշտոցն աշխարհ չի գալիս»:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիշյալ որոշմանն ի համերաշխություն՝ Փետրվարի 21-ը մի քանի տարի անց ներառվել է նաև մեր պետական տոնացույցում, և ամեն տարի այս օրը Արցախում ևս, հատկապես կրթօջախներում, նշվում է տարաբնույթ միջոցառումների կազմակերպմամբ: Միջոցառումների մակարդակով չէ, սակայն, որ պիտի գնահատել մայրենիի հանդեպ սերը. այն պիտի դրսևորվի պարբերաբար, մեր ամենօրյա վերաբերմունքի մեջ: Եթե խորհրդային տարիներին լուրջ սպառնալիք էր ռուսախոսությունը, ապա հիմա մեր բառապաշարում սկսել է լայն տարածում գտնել անգլերենը: Դա պայմանավորված է առօրյա կյանքում աստիճանաբար ավելի լայն կիրառություն գտնող «համացանցային լեզվով», որի բազմաթիվ տերմիններ թեպետ հայերենում ունեն իրենց համարժեքը, սակայն շատերը տուրք տալով ձևանմանությանը, նախընտրում են օտարախոս լեզուները: Արտաքին աշխարհի հետ արդյունավետ շփումն, անկասկած, անձի զարգացման համար կարևոր խթան է հանդիսանում, և լեզուներ իմանալն այս առումով անհրաժեշտ գործոն է: Բայց այլ բան է տարբեր լեզուների տիրապետելը, այլ բան՝ սեփական լեզուն երկրորդական դասելը: Օտարախոսության մասն դրսևորումները կարելի է համեմատել օտարասիրության հետ, ինչը ցանկացած ազգի համար «ոտքի տակի ական է»: Եվ հատկապես մեծ սփյուռք ունեցող հայ ժողովրդի համար լեզվապահպանությունը պետք է առաջնահերթ խնդիր դառնա ցանկացած պարագայում:

«Հայի լեզուն տունն է հայուն»։ Մուշեղ իշխանի այս պատգամը բոլոր ժամանակների համար է ասված: Տարվա բոլոր օրերին էլ սիրենք, փայփայենք ու պաշտպանենք մեր հայ լեզուն: Հանուն մեր մշտագոյության:

«ԼՍՏԱՐԱՐ»

ՀՁՈՐ ԲԱՆԱԿԻ ԱԿՈՒՆԵՐ ԸՆՅ ԸՆՏԱՆԻՔՆ Է



«Բանակը մեր տունն է, մեր ամրոցը» խորագրի ներքո արդեն երկրորդ անգամ անցկացվող հանդիպում-քննարկումը տեղի ունեցավ օրերս, Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատի դահլիճում:

Միջոցառմանը մասնակցում էին ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Դուլյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, կառավարության անդամներ, ՊԲ բարձրաստիճան սպայակազմը, զինծառայողների ծնողներ, հանրապետության մանկավարժական կոլեկտիվների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Քննարկման հիմնական թեման բանակ-ընտանիք կապն էր՝ իր բանաձևումներով, բանակի մարտունակության բարձրացման գործում հայ ընտանիքի ունեցած և ունենալիք դերի վերլուծությամբ ու բացահայտումներով:

Նախքան քննարկման անցնելը ներկաները դիտեցին «Ձինվորը» վերտառությամբ տեսաֆիլմը, որը պատրաստվել է «Գոյամարտ» հեռուստածրագրի կողմից:

Հանդիպման հիմնական բանախոսներն էին զոհված ազատամարտիկների ծնողներ, ՀՀ և ԼՂՀ ազգային հերոս Յուրի Պողոսյանի մայր Էլվիրա Պողոսյանը, ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի ասպետ Արմեն Մելքոնյանի մայր Լաուրա Մելքոնյանը, ԼՂՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանակիր Հակոբ Ավանեսյանի հայր Արպատ Ավանեսյանը, նույնպես ԼՂՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի ասպետ Իգոր Հասրաթյանի հայր Ալեքսանդր Հասրաթյանը, ինչպես նաև վերջերս ՊԲ մարտական հերթապահության դիրքերում հակառակորդի դեմ հերոսաբար մարտնչած և զոհված ու «ԼՂՀ Արիության համար» մեդալի արժանացած Արմեն Հովհաննիսյանի մայր Մարինե Հովհաննիսյանը: Ձոհված ազատամարտիկների ծնողների հետ միասին բեմահարթակ հրավիրվեցին Արցախի հանրակրթա-

պան ամրապնդվում է դպրոցում, բուհում ու բանակում:

Յուրի Պողոսյանի մայրը՝ տիկին Էլվիրան, ցանկացավ, որ նորեղյակ զինվորներն օրինակ վերցնեն հերոսներից ու նրանց թողած գործն ու պայքարը շարունակեն մինչև վերջ: Միջոցառման մասնակիցները չթաքցրած ու խորին հուզմունքով ունկնդրեցին Մարինե Հովհաննիսյանի պատգամները. «Թող բոլոր ընտանիքներում ծնվեն իմ որդու պես տղաներ, պահեն ու պահպանեն հայրենիքը: Դիմում եմ բոլոր դիրքապահներին ու նաև նրանց, ովքեր դեռևս չեն գորակոչվել: Միշտ պինդ եղեք, զգո՛ւ, քաջ, ոչ մի բանից չվախենաք, ինչպես չվախեցավ իմ Արմենը... Ես ճիշտ եմ դաստիարակել իմ տղային: Նա այսօր հանգչում է փառքի պանթեոնում, մեր ազգի պայծառ հերոսների կողքին: Ես հպարտանում եմ իմ որդով: Այդ միջադեպից հետո աշխարհի հայերը բռունցքվել են, միաբանվել, երիտասարդների մեծ խմբեր են գալիս մեր տուն, այցելում նրա շիրիմին, շնորհակալություն հայտնում նման որդի դաստիարակելու համար: Իմ որդին դաստիարակվել է այնպիսի ընտանիքում, ուր պաշտում են տատիկապահներին: Մենք պիտի ճիշտ դաստիարակություն տանք մեր զավակներին, հայրենասիրական ու հայրենագիտական դասերը պիտի լինեն առաջին տեղում: Մենք հայ ենք, մենք ուժեղ ենք և պիտի հարատևենք»: Տիկին Հովհաննիսյանը անթաքույց հպարտությամբ փաստեց, որ իր տղայի սերնդակիցները հասկանում են հողի արժեքը: Նրա բնորոշմամբ, յուրաքանչյուր դիրքապահ թագավոր տղա է: Իսկ վերջում տիկին Մարինեն տղաներին պատվիրեց լինել զոհն ու զոհույշ, քանզի քնած չէ թշնամին:

Հանդիպման մասնակից մի շարք կրթօջախների ծնողական կոմիտեների նախագահները նույնպես հանդես եկան առաջարկություններով: Ի՞նչ անել, որպեսզի ընտանիք-ծնողական կոմիտեբանակ կոնիտեները հասկանան ընտանիքի և հայրենասիրական կոմիտեների միջև առաջարկվող կապը: Քննարկման մասնակիցները փորձեցին հստակեցնել յուրաքանչյուրի անելիքը: ԼՂՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը միջոցառման մասնակիցներին կոչ արեց ներգրավվել առավել ակտիվ քննարկման, բացահայտել ու վերացնել այն բացերը, որոնք ընտանիքից տեղափոխվում են դպրոց, բուհ, ներթափանցում բանակ և հետո տեղ գտնում հասարակության շրջանում:

ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Դուլյանի կարծիքով՝ դաստիարակչական աշխատանքը դադար չպիտի ունենա, այն պետք է նպատակադիր ուղղվածություն ունենա: Նա

հպարտությամբ փաստեց, որ իր սերնդակիցները, սկսելով Արցախյան շարժումը, այն ամրապնդեցին ու հասցրին մինչև հաղթանակ, և նրանց օրինակով կարելի է բազում սերունդներ դաստիարակել: Աժ խոսնակը նաև առաջարկեց գտնել ընտանիք-դպրոց երկմիասնության առանցքը և ճիշտ կազմակերպել աշխատանքները: Նրա հավաստմամբ՝ բանակն ընտանիքի մոդելն է, և ինչքան մոտեցվի, այնքան ավելի քիչ խնդիրներ կունենանք: Աշոտ Դուլյանը նաև նշեց, որ մեր ընտանիքները միշտ էլ ապրել են բանակի հոգսերով, բայց այս վերջին շրջանում հիմնականում բանակն է նախաձեռնողը. ահա թե ինչու նա նաև հասարակական ակտիվության կոչ արեց:

Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը առաջարկեց խորհրդակցել բանակի հրամանատարության հետ, կազմակերպել հանդիպումներ աշակերտների հետ, լավագույն զինվորների այցը դպրոցներ, ծնողներին տանել գորհմասեր՝ սեփական աչքով տեսնելու՝ որտեղ են ծառայում իրենց զավակները և անել ամեն հնարավորը, որ ընտանիք-դպրոց-բանակ կապն ամուր հիմքերի վրա դրվի:

Ընտանեկան ճիշտ դաստիարակության կարևոր նախադրյալներից մեկն էլ օջախում տիրող հոգևոր կյանքն է: Այս թեմայով ներկաների հետ իր նկատառումները կիսեց Սահակ Վարդապետ Շաքարյանը:

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանի դիտարկումները վերաբերում էին ընտանիք-հասարակություն-բանակ միասնական կապի ստեղծման խնդիրներին: Նրա եզրահանգումը հետևյալն էր. մանկավարժներն իրենց աշխատանքում պետք է թարմություն մտցնեն և ճիշտ հետևություններ անեն քննարկման ընթացքում հնչած առաջարկություններից:

Պաշտպանության նախարարի հրամանով զոհված ազատամարտիկների ծնողներ Էլվիրա Պողոսյանը, Լաուրա Մելքոնյանը, Արպատ Ավանեսյանն արժանացան ՊԲ հուշամեդալի, իսկ լավագույն ուսումնական հաստատությունների (թիվ 1, 2 և 3 դպրոցներ) տնօրենները պարգևատրվեցին Ղարաբաղյան շարժման 25-ամյակի հուշամեդալով: Պաշտպանության նախարարի շնորհակալագրին արժանացան ծառայության ընթացքում իրենց գերազանց դրսևորած շարքայինների ու սերժանտների ծնողները:

Միջոցառումն ընդմիջվում էր թեմային առնչվող տեսահոլովակների ցուցադրությամբ:

Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԻՏԿԱՅԻՆ ՓՈՒԿԱՆԵՐ

Փետրվարի 21-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Մայրենի միջազգային օր հռչակվելը գուցե ուրիշ ազգերի համար այնքան էլ էական նշանակություն չունի, բայց մեր՝ հայ ժողովրդի համար այն տոնի համարժեքություն ունի: Կասկածողները կարող են ԼՂԴ կրթության և գիտության նախարարության՝ Մայրենի միջազգային օրվա կապակցությամբ հայտարարված միամսյակին մտնել հանրապետության ցանկացած հանրակրթական դպրոց, բացել ցանկացած դասարանի դուռ և համոզվել: Այդ տոնակալը շունչը զգացվում է դեռ կրթօջախի միջանցքներից՝ հայոց լեզվին նվիրված պատի թերթերից ու պատասաններից: Իսկ միջոցառումների ընդհանուր բովանդակությամբ տեղեկանալու համար կարելի է պարզապես մտնել ուսուցչանոց և ծանոթանալ դրանց ցանկին ու հասկանալ, որ արդեն անցկացվել են և շարունակվելու են մեկը մյուսից հետաքրքիր դասերը: Ասենք, որ նախախնամության մատր խառն է այս գործում: Փետրվարը նաև մեր ժողովրդի զարթոնքի ամիսն է. փետրվարին սկսվեց հայ ժողովրդի՝ ի դեմս նրա արքայի զորքերի հատվածի, անկախության ու ազատության համար դարավոր պայքարի նոր օրոյա շարժումը: Փետրվարին է մեր ազգային կարևոր տոներից մեկը՝ Տյառնընդառաջը, որի շնորհիվ վե-

րակենդանացել են հոգևոր-մշակութային շատ ավանդույթներ: Փետրվարին է ծնվել Ամենայն հայոց բանաստեղծ Գևորգի Թումանյանը, որի ծննդյան օրը նշելը սկիզբ է դրել գեղեցիկ մի ավանդույթի՝ գիրք նվիրելու օրվան և որը վերածվել է գրքի, խոսքի արժեքալից յուրատեսակ տոնի: Եվ վերջապես, այդ ամիսն է նշվում Հայրենյաց պաշտպանի օրը, այդ ամիսն է ծնվել զորավար Անդրանիկը: Եթե ավելացնենք, որ միամսյակը, սկսվելով հունվարից, ընդգրկում է նաև մեծ բանաստեղծներ Պարույր Սևակի ու Միլվա Կապուտիկյանի ծննդյան օրերը, պատկերացնել կարելի է միջոցառումների հագեցվածությունն ու ոգեղենությունը: Ուրիշ է ե՞րբ կարող ենք ավելի շատ լսել հայոց լեզվի մասին այնքա՞ն գեղեցիկ բանաստեղծություններ, օտարների գնահատանքի խոսքը հայերենի, մեր մեծերի մտքերը մայրենի մասին, լսել ու կարդալ իրենց իսկ՝ աշակերտների ստեղծագործություններն այդ թեմայով, ականատես լինել ինտելեկտուալ խաղերի ու մրցույթների հայերենից: Անշուշտ՝ միամսյակը ամենա-հարմարն է: Եվ «Լուսարարը» այդպես էլ արել է: Պատահական օրեր մտել է Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոց:

տոն, Լեոնիդ Ազգալույանը, Աշոտ Դուլյանը (Բեկոր), մյուսները: Արցախյան շարժումը պակասակց հաղթանակով, որովհետև կանավորական ջոկատների հիման վրա ստեղծվեց մարտունակ բանակ, որն այսօր զսպում է թվաքանակով գերակշռող թշնամուն: Եվ ի դեմս այս աշակերտների, հավատում ես, որ ունենք մեր վաղվա անդրամիկներն ու սուս մայրիկները: Հավատում ես՝ նայելով նրանց վստահ կեցվածքին ու խոսքին, ապագա զինվոր Վահե Ներսիսյանի երդմանը, ով օրինակ ցույց տվեց, թե ինչպես է զինվորական երդում տալու՝ երբ ծառայության կանցնի մեր Պաշտպանության բանակում: «Անձնվիրաբար ծառայել հայրենիքին, համուն նրա չլնայել կյանքը...»:

Դպրոցում մեկ այլ հայրենասիրական կարիքն է կա՛մավորված համապատասխան պարագաներով: Բայց երևի ամենարժեքավոր նյութերն աշակերտների առաջին գիտական ուսումնասիրություններն են՝ ռեֆերատները: Թեմաների թվարկումն իսկ խոսում է աշխատանքի բովանդակության մասին. «Հայկական հարցը», «Հայաստանի առաջին հանրապետությունը», «Արի պայմանագիրը», «Մայիսյան հեղուկամարտեր» և այլն: Առանձին թղթապանակ կա նաև հասարակագիտությունից: Կարծեստի վարիչ Լիլյա Կարոյանյանի խոսքով՝ այստեղ անցկացվում են աշակերտական ընթերցումներ, հավաքված նյութերից օգտվում են հետագա աշակերտները:

ՍԻՐԵԼ ՄԱՅՐԵՆԻՆ՝ ՆՇԱՆԱԿՈՒՄ Ե ՍԻՐԵԼ ՀԱՅՐԵՆԻՍԷՐ

Իսկ սիրելի հայրենիքը՝ նշանակում է իմանալ նրա պատմությունը, մշակույթը, հերոսներին, յուրացնել ազգի բարձր արժեքալից կարգը, ապրել նրանով: Նման ուսանելի դասեր կարելի է առնել բոլոր առարկաներից, եթե ուսուցիչներն ունեն պատրաստակամություն և պատրաստակամություն:

Մայրենիի միամսյակի շրջանակներում Ստեփանակերտի հ. 8 դպրոցի պատմության ուսուցչուհի Ռանելա Մուկիսյանի և զինղեկ Ալվա Բախչյանի համատեղ կազմակերպմամբ ավագ դասարանների աշակերտները ներկայացրին դաս-միջոցառում՝ «Ֆիդայական շարժում» թեմայով: Այն անցկացվեց ազգամոլության կարիքներով: Տպավորիչ էին զինվորական համագետ հագած պատահիների ու պարմանուհիների ելույթները թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի 19-րդ դարի կեսերի պայքարի մասին, որը կրում էր ֆիդայական շարժում անունը: Հայ ֆիդայիներն ինքնակամ նահատակության գնացող, ամեն մի զրկանքի ու զոհաբերության պատրաստ մարդիկ էին՝ միացած սրբազան երդումով, որի հիմնական կետերն են՝ լինել անթերի, կենցաղում անբեռ, հայրենասիրության մեջ՝ հետևողական, կռվելու և հաղթելու համար հնարամիտ: Ֆիդայական խմբերի այդ սկզբունքներն ամփոփել և ամբողջացրել է հայոց ամենամեծ հայրուկ և ֆիդայի Անդրանիկը «Մարտական հրահանգներ» գրքույկում:

Աշակերտները հնչեցնում են մլի-րական անուններ՝ Արաբո, Զրայր Դոժոբ, Սեֆարեցի Սաբո, Սեբաստացի Մուրադ, Նիկոլ Դուման, Խանաստի Կարոյան, Աղբյուր Սերոբ, Գևորգ Զառչ, Սուս և Աննա մայրիկ, Անդրանիկ և Գարեգին Տժեհ, ֆիդայական շարժման ամենամեծ գաղափարախոս ու գեղագետ Րաֆֆի, ներկայացնում են նրանց սխրագործությունները, իսկ մեծ էկրանին համակարգչի օգնությամբ ցուցադրվում են նրանց նկարները: Երեխաները պատմում են ոգեշնչված, ասվածի ողջ իմաստի գիտակցումով. ֆիդայական շարժու-

ՍԻՐԵԼ ՄԱՅՐԵՆԻՆ՝ ՆՇԱՆԱԿՈՒՄ Ե ԱՆՈՒՄՑ ԴԱՅԵԼ ԱՅՆ

ել ինչ տոն՝ առանց գեղարվեստական խոսքի ըմբռնիման: Դպրոցում միամսյակի մեկ օրը հատկացվեց ասումների խմբակի անդամներին: Նրա ղեկավար, հայոց լեզվի և գրականության մեթոդիկոմի նախագահ Ռուզաննա Աբրահամյանը հպարտությամբ է նշում նրանց հաջողությունները: 12-րդ դասարանից Մարիամ Աբրահամյանը ասումների հանրապե-



ՍԻՐԵԼ ՄԱՅՐԵՆԻՆ՝ ՆՇԱՆԱԿՈՒՄ Ե ԴԱՅՐՊԱՆԵԼ ԱՅՆ

Իսկ պահպանել մայրենին՝ նշանակում է խոսել նրանով, խոսել անաղարտ հայերենով: Դրա ջատագովները հայոց լեզվի և գրականության ուսուցիչներն են, որոնց նաև մայրենիի մկրտիչներ են անվանում: Լյուդմիլա Յարամիշյանը նրանցից մեկն է: Նրա կազմակերպած բաց դասը 6-րդ դասարանում էր և նվիրված էր մայրենիին:

Ներկաներն անմիջապես ընկղմվեցին մայրենիական մթնոլորտը: «Իմ սուրբ մայրենի», «Իմ քաղցրիկ հայոց լեզու», «Հայոց լեզու» վերնագրերով աչք շողող պատի թերթերն ու պատասաններն է այլ պարագաներ, էկրանից հորդող «Եվ այդ մի՜ Մաշտոց անուն» Պ. Սևակի պոեմից տողերը ստեղծեցին հաճելի լեզվակենսադաշտ: Ուսուցչուհին աննկատ բացեց դասը՝ նախ զուգորդելով «մայրենի լեզու», «հայրենի երկիր», «սուրբ հայրենիք» բառակապակցությունները: «Սրբություն է մեզ համար մեր հողը, երկիրը: Այդ երկիրը մենք անվանել ենք հայրենիք: Հայրենիքի, հողի սրբությունը զուգորդվում է մեկ այլ սրբության հետ՝ հայր: Բայց բավական է «հայրենիք» բառին կցենք «մայր» մակերից, և կտեսնենք ինչ հնչեղություն կտա՝ «մայր հայրենիք»: Ասել է թե՛ երկիր, որ սուրբ է հոր նման, քաղցր՝ մոր նման: Եվ պատահական չէ, որ հայոց լեզուն անվա-



նում ենք մայրենի, ասել է թե՛ մոր նման քաղցր, հոր նման՝ սուրբ»:

Ուսուցչուհին հենց սկզբից ինքնավստահությամբ առաջացրեց աշակերտների մոտ՝ ասելով, որ նրանք շատ բան գիտեն հայոց լեզվի, Մեսրոպյան այբուբենի, մեր Մեծ ուսուցչի մասին: Ու նաև՝ հրաշալի գիտեն, որ հայոց այբուբենը մեր ինքնության գրավականն է, փարոս է եղել դարեր ի վեր և դեպի դարեր տանող ճանապարհին:

Բայց այն մեկ ուրիշ առաքելություն էլ ունի: Եվ մի հետաքրքիր պատմություն է պատմում՝ իր կողմից նոր երանգներ ավելացնելով, աշակերտների մեջ հետաքրքրության կրակ վառելով: Ավ. Իսահակյանի մի պատմվածքն էր դա, որն այն մասին է, թե ինչպես ինքն ընկերների հետ շրջագայում էր Հայաստանի հեռավոր գյուղերում: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ցարական Ռուսաստանը փակել էր տվել հայկական դպրոցները, ու դրանք գործում էին գաղտնի: Եվ ահա այդ գյուղերից մեկում նրանք ցանկացած ծանոթանալ դպրոցին: Ուսուցչուհին այստեղ էլ համեմատություն անցկացրեց: Դպրոց ասածը այսօրվա աշակերտների հանախած հոյակապ շենքերով, կահավորված, լուսավոր դասասենյակներով դպրոցը չէր, այլ մի անշուք սենյակ, որտեղ փայտե ստարանների տեղավորված էին երեխաները՝ փոքրից մինչև մեծ: Հյուրերն սկսում են հարցուփորձ անել և, հուրախություն իրենց, պարզվում է, որ նրանք (ուսուցչուհին այստեղ էլ շոյեց երեխաների ինքնասիրությունը) ուշիմ են, բանիմաց, խելացի՝ իր աշակերտների պես: Հյուրերից մեկը երիտասարդ ուսուցչին հարց-

նում է, թե երեխաները կարող են երգել մի ազգային երգ: Ուսուցչը շփոթվում է, կարծես չգիտի իր անելիքը: Ու մեկ էլ ասես նրա ուղեղում մի միտք է ծառայում: Սեղանից վերցնում է փայտիկը, որն, ըստ երևույթին, իր համար ցուցափայտ էր ծառայում, և ձեռքի շարժումով՝ ինչպես նվագավարը չափ կտա երգչախմբին՝ ինչն էլ նվագախմբին, հենց ձեռքը բարձրացնում է, երեխաներն անխոս հասկանում են նրա միտքը: Եվ դասարանում գրնգում է նրանց ձայնը. բոլորը միասին արտասանում են (ու այստեղ ուսուցչուհին դիմում է իր դասարանին՝ ինչպես ես կցանկանայի, որ դուք էլ ինձ հետ միասին արտասանեիք) այբ-բեն-գիմ-ը... Մեր այբուբենի ազգայնական առաքելությանը ուսուցչուհին հավելում է ազգային երգի առաքելությունը: Ինչպես գիտենք, պատմվածքն ավարտվում է հետևյալ գաղափարով. «Քանի հայը կայրի, հայոց «այբ-բեն»-ը չի մեռնի»: Բայց նաև՝ «Քանի հայոց «այբ-բեն»-ը կայրի, հայը չի մեռնի...»:

Ու հետևում է ուսուցչուհու պատգամը՝ որ երկրում էլ ապրեն (բայց ամենավաղ այն է, որ քո երկրում ապրես - խմբ.), չնոռանան մայր լեզուն, որին հետևում է աշակերտների հավաստիացումը՝ երդման ձևով:

Աշակերտներին խթանելով՝ ուսուցչուհին ասում է ձևով դասը մտքեց իմաստավորման փուլ: Համոզմարտված էր տանը տետերում գրի առնել օտարների և հայոց մեծերի մտքերը, առած-ասացվածքներ հայոց լեզվի մասին: Աշակերտները կարդացին: Իհարկե, առաջին անգամ չես լսում դրանք, բայց և չես դադարում հիանալ ու զարմանալ այդ խոսքոված մտքերով: «Երկար լեզուն կարճացնում է մարդու կյանքը»: ինչքան իմաստություն, փիլիսոփայություն է պարունակում այս մի կարճ նախադասությունը: Աշակերտների թվարկումներին ուսուցչուհին ավելացնում է եզովպոսի հայտնի առակը լեզվի մասին, որն աշխարհի ամենավաղ և ամենավատ բանի՝ լեզվի մասին է: Ամենավաղ՝ որովհետև լեզուն մարդու տունն է կշիռի, վերք կլավացնի, մարդուն հաղթանակների կհասցնի, պետություններ կկառուցի, միևնույն ժամանակ ամենավատ՝ քանի որ վերք նշածի հակառակը կարող է անել: Այստեղից էլ նրա դաստիարակչական նշանակությունը՝ իմանալ՝ երբ և որտեղ ինչպես խոսել, լեզուն բերանում պտտեցնել այնպես, որ օվկիաններ պտտելուց միշտ քեզ կանցչի ափ հասցնի:

Դասն աստիճանաբար մտնում է երրորդ՝ կշռադասումն փուլ: Ասպարեզ են դուրս գալիս ասումները: Եվ թևածնում են «Ինչո՞ւ չես խոսում հայերեն», «Հայ լեզուն տունն է հայրենի», «Պատգամ» ու մեկը մյուսից հոյակապ այլ բանաստեղծություններ:

Դասը միայն պաթետիկ ոգով չէր կառուցված, նրա մի էջը հումորային էր: Երեխաները ներկայացրին երգիծական փոքրիկ երկխոսություններ. լեզվի միջոցով կարելի է հանգստանալ, թեթևանալ... 45 րոպեանոց դասն անցավ աննկատ: Ապահովված էր միջառարկայական կապը, օգտագործվեց համակարգիչը, և ամենակարևորը՝ զգացվեց աշակերտների սերը մայրենիի նկատմամբ, որն էլ դասի նպատակն էր:

Այսօր համախ էն անցկացվում բաց դասեր միջոցառումների ձևով: Մի կողմից դա ներկայացնում է, որովհետև նախօրոք փորձեր են արվում, բայց մյուս կողմից էլ արդարացվում են այն բոլոր միջոցներն ու մեթոդները, որոնք աշակերտներին գիտելիքներ են տալիս, սեր առաջացնում առարկայի նկատմամբ, նպաստում ուսուցչի առջև դրված խնդրի իրականացմանը: Համեմայն դեպ, վարպետ ուսուցչուհի Լ. Յարամիշյանը, ի պատասխան դպրոցի տնօրեն Լյուկա Գևորգյանի ցանկության՝ աշա-



մը թեև չվերածվեց համահայկական պայքարի և մեկ կենտրոնի կողմից ղեկավարվող ազգային-ազատագրական շարժման, սակայն իր մնալուն հետքը թողեց հետագա պայքարի վրա: Շատ ֆիդայիներ հետագայում ընդգրկվեցին ազգային կանավորական խմբերում ու լեզոններում՝ պայքարելով հայ ժողովրդի անկախության ու ազատության համար: Երբ միջոցառումներն էին Արցախյան շարժման մկրտիչները: Այն հատկանիշները, որոնցով օժտված էին ֆիդայիները, կրում էին Արցախյան գոյամարտի հերոսներ Սոնթեմ, Պե-

տական մրցույթում գրավել է առաջին տեղը և առաջիկայում երևանում կցուցադրի իր արվեստը:

Ասումը լավագույն ձևերից մեկն է՝ բացահայտել մայրենիի ողջ գեղեցկությունն ու հմայքը և իհարկե՝ հեղինակի ստեղծագործությունը: Նրանցից ամեն մեկն, ուսուցչուհու խոսքով, պատրաստի դերասան է: Պետք է ասել, որ վերջին տարիներս աշխուժացել է ասումների ժանրը, ասել է թե՛ անաղարտ հայերենի քարոզման այդ միջոցն ակտիվ գործում է: Արժեքներ կան լինել նաև այս միջոցառմանը և նորից հպարտության զգացում ապրել, որ կրողն ենք հայերենի: Եվ մեծ հայի՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի կտակը յուրաքանչյուրը համարի իրեն ուղղված:

«Ինձ հաջորդող սերունդներին, թոռներին, ծոռներին կտակում են տիրապետել հայոց լեզվին: Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինի հայերենից՝ անկախ այն բանից, թե քանի տուրկու է նրա մեջ հայկական արյունը: Այդ տոկոսը ոչինչ չի նշանակում: Ենթե փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ, և այդ գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է: Այդ կապակցությամբ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է լավ սովորեցնել հաջորդին հայոց լեզու:

Գիտե՞ք, որ իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է ու կմնա, քանի ապրում եմ, հայոց լեզվին տիրապետելը»:

Որպես վերջաբան. Մայրենիի օրն ընդամենը գեղեցիկ առիթ է հայերենի ուսուցման, պահպանման, տարածման ուղղությամբ կատարած ընդհանրացնելու, ցուցադրելու, փառաբանելու: Իսկ ամբողջ տարին՝ հետևողական, համառ, տրեւաբան ու նվիրված աշխատանք տանելու: Մայրենիի միամսյակն ավարտվում է, բայց տարին շարունակվում է:

ՀԱՅՏՐԵՆԻ ՏՈՆ

ՄԱՅՐ, ՀԱՅՏՐԵՆԻՔ, ԼԵՂՈՒ

Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզունն ա ու հավատը: Լեզունը փոխիր, հավատը ուրացիր, էլ ինչո՞վ կարաս ասիլ, թե որ ազգիցն ես, ծեղ են ասում, ծեղ, տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, հավատը դալիմ բռնեցեք...

Խ. Արմվյան

Մայրենիի միջազգային օրվան ընդառաջ՝ Լեզվի պետական տեսչությունն անցկացրեց ավանդական միամսյակ, որի շրջանակներում հանրակրթական դպրոցներում կազմակերպվեցին մեկը մյուսից հետաքրքիր միջոցառումներ: «Մայր, հայրենիք, լեզու» խորագրով համաքաղաքային գեղեցիկ միջոցառում էր կազմակերպվել Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցում: Ներկա էին կրթության և գիտության նախարարության և քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի ներկայացուցիչներ, քաղաքի դպրոցների հայոց լեզվի և գրականության քաղաքային մեթոդիկական կազմակերպիչներ, հայոց լեզվի և գրականության մասնագետներ: Հանդիպումը սկսվեց միջոցառման կազմակերպիչ՝ դպրոցի փոխտնօրեն Էլենուհուր Ալեքսանյանի շնորհավորանքի խոսքով:



ու մառախլապատ է: Տիկին Ալեքսանյանը կոչ արեց՝ եկեք հայերեն սիրենք մեր Արցախը, հայերեն կերտենք մեր ապագան, եկեք հայերեն ծխադուխտենք ու հայերեն խոսենք, եկեք լինենք հայերենասեր և հայրենասեր: Այնուհետև հնչում է մեր ոսկեդեմիկ մայրենին՝ հայոց մեծերի սրտահույզ տողերով: Իրար ընդհատելով, իրար շարունակելով՝ արտասանում էին միջոցառման մասնակիցները, որոնք ցույց տվեցին լեզվի ամբողջ հնայքն ու հարստությունը, հույզերն ու զգացումները: Ներկայացրին մեծ բավականություն:

- Այսօր տոն է բոլորիս համար: Մայրենին մեր հոգևոր հայրենիքն է: Լեզվի պահպանությունը սկսվում է ընտանիքից, ձևավորվում դպրոցում և հարատևում կյանքում, լեզուն է, որ հային հայ պահեց, և հայը կարողացավ անհաղթահարելի հաղթահարելի դարձնել: Եվ դար դարի ետևից այն

թյուն պատճառեցին գեղեցիկ հնչեցրած՝ հայերենին նվիրված ասույթներն ու քառատողերը, հայկական երգն ու պարը, որոնք ուղեկցվում էին դաշնամուրի նվագակցությամբ: Երեխաների շուրթերով հնչող գովքն առ մայր լեզու, հայ ժողովուրդը, հայրենիք անաղարտ հայրենիք՝ լավագույն հավաստումն է այն բանի, որ դարերից եկող մեր լեզվի երթն անվախճան է դեպի դարեր: Ուրեմն՝ եթե կա լեզուն, կենսունակ է, ապրում է նաև նրանով խոսող ժողովուրդը և հակառակը: Ինչպիսի՞ սուրբ միասնություն...

Հպարտանալով մեր մայրենիի հնամենի գոյությամբ՝ սիրենք ու փայլախեղ հայոց լեզուն: Ծշմարիտ է ասված՝ մայրենի լեզվի ապագան հայրենիքի ապագան է: Պաշտպանելով մայրենի լեզուն՝ ինքներս մեզ ենք պաշտպանում ու մեր երկրի անասան լինելու համար պարիսպ կառուցում: Դպրոցի տնօրեն Լ. Հովհաննիսյանը բարձր գնահատեց աշակերտների աշխատանքը, դրվատանքի խոսք ասաց է. Ալեքսանյանի վարպետության, մանկավարժական տակտի մասին, իսկ հյուրերը եկան այն եզրակացության, որ ռուսական թեթև ունեցող այս դպրոցում բարձր հիմքերի վրա է հայեցի դաստիարակությունը: Ինչպես չասել՝ մայրենին վստահելի ձեռքերում է:

Անահիպ ՄԵՍՐՈՒՅԱՆ

ԼԵՂՈՒՆ ՀԱՅՏՐԵՆԻՔ Է

Իսկ իսկությունն է՞, որ գորքից հետո Միշտ էլ լեզուն է մարտադաշտ հանել էվ ինչ չի կարող ոչ մի գորք անել՝ Լեզուն է անում:

Գ. Էմին

Հայ ժողովուրդն իմաստաբար իր ամենաբանկ արժեքներին հավելել է «մայր» բառը և մայր Հայաստանը, մայր հողն ու մայրենի լեզուն դարձրել պահպան, իբրև սրբություն սրբոց: Հազարամյա իր երթում միշտ անսպառ հայոց լեզուն հզոր միջոց էր մեր ազգային դիմազինը, մեր կեցվածքն ու կենսակերպը պահպանելու գործում:

Մեր լեզուն սկիզբ առնելով դարերի խորքից, դժվար ճանապարհ է անցել, սնուցվել, հորդացել ու մաքրվել՝ նմանվելով Արարատի ծեր կատարին՝ փայլուն, ինչպես սպիտակ ծյուն:

Օրերս Ք. Իվանյանի անվան ռազմաարզական վարժարանում կազմակերպվեց միջոցառում՝ նվիրված Մայրենիի օրվան: Բացման խոսքով հանդես եկավ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ՝ մայր Գ. Բաղդասարյանը: Նշելով դարերի խորքից եկած մեր պանծալի մայրենիի դերը՝ նա խոսքը տրամադրեց վարժարանի ուսումնական մասի պետ Ա. Ավետիսյանին: Իր խոսքում, ցույց տալով հայոց լեզվի ճոխությունը, նա կոչ արեց հայրենասեր իվանյանականներին՝ անաղարտ պահել մեր ոսկեդեմիկ մայրենին: «Իսկ դրա համար ամենից առաջ պետք է լավ ճանաչել, լավ իմանալ լեզուն, թափանցել նրա խորքերի ու գաղտնիքների մեջ»,- ասաց մայր Ավետիսյանը:

Անչափ բովանդակալից էր հայոց լեզվի և գրականության դասախոս Գ. Գաբրիելյանի ելույթը:

«Մեր նախնիների թողած ժառանգության մեծագույն գանձը մեր լեզուն է»,- ասաց նա և պատգամեց պահել-պահպանել, սիրել-փայլախեղ մեր աղոթքի լեզուն:

Գրական-գեղարվեստական կոմպոզիցիայով հանդես եկան սաները: Նրանք երաժշտության ներքո ասունքեցին հայ գրողների ամենաընտիր բանաստեղծություններից՝ նվիրված հայոց լեզվին:

Դահլիճում ոգևորություն էր. ասունքող սաների հետ արտասանում էին դահլիճում նստածները:

Վերջում հրավիրվածներից ոգևորության խոսք ասաց ՊԲ հրամանատարի տեղակալ՝ գեներալ-մայր Ա. Ղահրամանյանը: Նա իր գոհունակությունը հայտնեց հաջողված միջոցառման վերաբերյալ և իր հերթին կոչ արեց ապրել, արարել հայավարի:

Օրն, իրոք, տոնական էր:

Կարինե ՄԿՐՏՅԱՆ
ԱրՊՀ լրագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի

ԽՈՍՔԻ ՄԵՆ ՆԿԱՐԻՉՁ

Յուրաքանչյուր դաս ստեղծագործություն է, իսկ ուսուցիչը՝ ստեղծագործող: Դասը նաև արվեստ է, գրականության դասը՝ առավել ևս: Ուրեմն՝ գրականության ուսուցիչն ուսուցանող ու դաստիարակող է: Նա որոնում ու փնտրում է իր արվեստն աշակերտներին մատուցելու նորանոր ձևեր ու մեթոդներ, կրթելու և դաստիարակելու նպատակով դասն ավելի բովանդակալից ու հետաքրքիր է դարձնում:

Գեղարվեստական գրականությունը կյանքի բազմակողմանի արտացոլման շնորհիվ դաստիարակության ամսպառ հնարավորություններ է ընձեռում: Դաստիարակել կարելի է նաև փոքրիկ մի բանաստեղծության միջոցով:

Օրերս Ստեփանակերտի Խ. Արմվյանի անվան հ. 1 հիմնական դպրոցի 7-րդ դասարանում (ուսուցչուհի՝ Անայա Վանյան) կազմակերպվեց քաղաքային բաց դաս հայ գրականությանից (թեման՝ «Համո Սահյանի ստեղծագործությունը»): Դասասենյակը կախավորված էր ճաշակով: Գրատախտակին Հայաստանի պատկերը խորհրդանշող մասերին էր, կողքին՝ Հ. Սահյանի ստեղծագործության նշանաբանը համարվող հետևյալ տողերը.

Աչքն ու ականջն են ես մայր բնության, Գիտակցությունը նրա մարմնավոր... Գրատախտակի աջ ու ձախ կողմերին աշակերտների լավագույն գործնական աշխատանքներից երկու օրինակ էին՝ « Խոսքի մեծ նկարիչը» խորագրով: Դիմացի պատե-

րին «Իմ գույները» վերնագրով խոսուն բնակարաններ էին: Առաջին հայացքից դասասենյակի յուրօրինակ կախավորանքը գեղանկարչի արվեստանոցի տպավորություն էր: Գույների լեզվով երեխաներն արտահայտել էին իրենց վերաբերմունքը Հ. Սահյանի բանաստեղծությունների նկատմամբ: Եկրանի վրա այուրյաց պատմական ծորերում հոսող Որոտանն էր, տաղանդավոր բանաստեղծի պատկերած ծիածանները, ջրվեժները, գետերը, նրա երգած Լորագետը, Գյազբելը, Հայաստանի խորհրդանշաններ բարդին, փշատենին, ժայռերը, քարերը, հաղաթի ու մոշի թփերը: Մի խոսքով՝ ամեն ինչ տրամադրող էր ու սահյանական: Ներկաները կլանված լսեցին նախ՝ Հ. Սահյանի խոսքը, ապա՝ Սիվա Յուզբաշյանի բարձրարվեստ կատարումը:

Ուսուցչուհի Ա. Վանյանն իր համոզիչ խոսքով անընդհատ ոգևորում էր աշակերտներին, վարպետորեն ներգրավում դասապրոցեսի մեջ: Նա արտասանում էր, աշակերտները շարունակում էին՝ ասես լրացնելով մեկը մյուսին: Բացի ծրագրային «Անտառում», «Մասրենի» բանաստեղծություններից, արտասանեցին նաև «Նահրայան դալար բարդի», «Քամու համբույրը», «Տերևը», «Չկնիկն առվին խուտուտ տվեց», «Ախր ես ինչպե՞ս...», «Անունդ տալիս» և շատ այլ բանաստեղծություններ:

Շատ հաճելի ու գովելի է այն փաստը, որ աշակերտներից երկուսն իրենց գեղեցիկ ասունքով անգամ գերազանցեցին ուսուցչուհուն:

Ուսուցչուհի Ա. Վանյանը դասապրոցեսն առավել հետաքրքիր դարձնելու նպատակով զուգակցեց դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդները: Իր նպատակին ծառայեց ինտերակտիվ ուսուցման մեթոդը: Աշակերտների առաջին խումբը ներկայացրեց «Անտառում» գողտրիկ բանաստեղծությունը, երկրորդը՝ «Մասրենին»: Ինչպես բանաստեղծն էր հասկանում բնության լեզուն, այնպես էլ աշակերտներն էին փորձում յուրովի թարգմանել տերևի շրշուրը, սոճու և եղևնու խաղաղ զրույցը, մեկնաբանել անտառային կյանքի անշունչ գաղտնիքները, փորձում հասկանալ անտառում կողք կողքի ապրող կյանքի և մահվան փիլիսոփայությունը:

Դասարանի լավագույն աշակերտուհիներից մեկին հանձնարարվեց վարել դասը: Կարճ ժամանակով ուսուցչուհու դեր ստանձնած աշակերտուհին հարցեր առաջադրեց դաշնակերտներին՝ լրացնելով դասանյութը: Ուսուցչուհին իր խոսքով վստահություն էր ներշնչում նրան՝ ոգևորելով զուգե ասագա մանկավարժին: Իսկ դասարանի տղաներից մեկը պատվով կատարեց իր առաքելությունը՝ մի քանի րոպեով ստանձնելով խոսքի վարպետի դերը:

Գրականության դասի արդյունավետության գլխավոր պայմաններից մեկը դասին բազմակողմանի նախապատրաստվելն է, օրվա թեմայի ճիշտ պլանավորումը: Նյութի մատուցման ձևերն ու եղանակներն էլ բազմազան են: Գլխավորն է՝ գրավել աշակերտների ուշադրությունը,

անցկացնել տպավորիչ զուգահեռներ, ինչն էլ հաջողվեց Ա. Վանյանին: «Մասրենին» բանաստեղծությունը վերլուծելիս ուսուցչուհին զուգահեռներ անցկացրեց Ն. Քուչակի «Ես չե՞քթալուի մոր՞ էի» հայրենի և «Ախր ես ինչպե՞ս...» բանաստեղծությունների միջև: Իսկ աշակերտուհիներից մեկը 4-րդ դարի հայ ժողովուրդի պատմությունից վերհիշեց «Արշակ և Շապուհ» գրույցը: Հայրենի երկրից բերված հողից Արշակ թագավոր ուժ է առնում, դառնում համարձակ, վստահ: Մասրենին և հայ ժողովուրդը Մույն ճակատագիրն ունեն. մասրենին՝ «Պիրկ պարսնի սման արմատով կառչած քարե երկնքին», իսկ հայ ժողովուրդը՝ իր մի բուռ քարքարոտ տարածքին: Երկուսն էլ անհող, բայց երկուսն էլ հզոր՝ իրենց արմատով: Այստեղ աշակերտներն օրինակ բերեցին նաև Անթեսիսի՝ հունական դիցաբանությունից (Անթեսիսը ծովերի աստված Պոսեյդոնի և Լիբիայի դիցուհի Գեայի որդին է: Բավական էր Անթեսիս կտրել գետուհի, և նա դառնում էր անգոր ու անօգնական):

Աշակերտներից մեկը գիտակցաբար մասրենու ոչ թե մեկ, այլ մի քանի թուփ էր նկարել՝ մեկնաբանելով այսպես. «Հայ ժողովուրդը մեջքը շտկած թող միշտ ապրի, միասնական, ոչ թե մասրենու սման կորացած ու միայնակ»:

Ուսուցչուհին, բնականաբար, չէր կարող շրջանցել բառային ու տեքստային աշխատանքը, քանի որ Հ. Սահյանի պոեզիան հարուստ է հյուսթեղ համեմատություններով, մեկը մյուսից գեղեցիկ, աչք շլացնող փո-

խաբերություններով, մակդիրներով, դարձվածքներով, անձնավորման հիանալի օրինակներով, որոնք դիպուկ ու կենդանի են դարձնում բանաստեղծի խոսքը: Քարտային աշխատանք ստացան որոշ աշակերտներ: Հետաքրքիր էր նաև ը-ի ուղղագրությունն ու ուղղախոսությունն ամփոփող բառախաղը:

Վերջում աշակերտները գրատախտակին Հ. Սահյան մարդուն և Հ. Սահյան բնարերգուին բնութագրեցին համապատասխան գոյականներով ու ածականներով և ընդհանրացրին մեկ բառով՝ Աստված:

Դասն ավարտվեց Հ. Սահյանի «Գարուն է գալիս» անգուգական երգով: Գեղեցիկ երգն ու երաժշտությունն ավելի բարձրացրին ներկաների տրամադրությունը և դրական լիցքեր հաղորդեցին:


Ահա այսպես միջառարկայական կապերի ճիշտ ու տեղին օգտագործումը նպաստում է աշակերտների կողմից գիտելիքների յուրացման արդյունավետության բարձրացմանը, նյութերի ընկալման հեշտացմանն ու հոգնածության կանխմանը, ընդլայնում նրանց մտահորիզոնը, հետաքրքրությունների շրջանակները:

Գրականության այս դասը հայրենասիրական և գեղագիտական դաստիարակության լավագույն օրինակ է:

Ուսուցչուհի Ա. Ստեփանյան
Ստեփանակերտի հ. 6 հիմն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. մեթոդմասնախմբի նախագահ

ՀԱՐՑԱԶԻՐՈՒՅՑ

ԴժՎԱՐ Է ԵՐԱԶՆԵՐԸ ԶԱՓԵԼ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՏ



- Ո՞վ է Մաքսիմ Գորկու հիշատակը, արձակագիրը, լրագրողը, թե՞ հրապարակահոսը:

- Սա այն հարցն է, որն ինձ միշտ տրվում է, և միշտ էլ չեմ կարողանում և՛ ճիշտը ասել, և՛ սուտը բացատրել: Ամենից՝ մի քիչ: Եվ եթե ուզում ես իմանալ, դա է իմ մեծ սխալը՝ թե՛ ճանապարհի ընտրության, թե՛ արդյունքի հարցում: Ես բազմիցս ասել եմ՝ գրականությունը խանդոտ կին է, որը երբեք չի կարող մերել իր սիրածի դավաճանությունը: Եվ դաժանորեն իր վճիռը կայացնում է: Այնպես որ, և՛ սոցիալական (իմ սերնդակիցների մասին է խոսքը), և՛ խոսքի ազատության, և՛ բազմաթիվ այլ առումներով գրականության մարդիկ չեն ստեղծել այն, ինչին իրենք ընդունակ էին: Իհարկե, կարող եք հակափաստեր բերել: Վերջին հաշվով, խորհրդային շրջանում Պաստեռնակն է ստեղծագործել, Շոլոխովը, Չարենցը, մյուսները: Սրա պատասխանը պարզ է. հանճարների համար օրենքներ գոյություն չունեն: Մյուս դեպքերում հասարակական, քաղաքական, տնտեսական և այլ կարգի պայմանները պայմանավորում են ստեղծագործողի ընթացքը, ստեղծագործական հնարավորությունները: Դրա համար էլ դժվար է ընդհանրապես սպառիչ պատասխան տալ:

Կարող եմ մի փոքր բացառություն անել: Խոսքը Արցախյան շարժմանն է վերաբերում. երբ արդեն մեր Գոյապայքարի ախիքները բարձրացել էին մինչև վերջ, երբ որպես գրող, լրագրող՝ լիարժեք հնարավորություն էր ստեղծվել դրսևորելու ստեղծագործողի էությունը ու մասնակցությունը այդ շարժմանը: Ոչ միայն իմ դեպքում, այլ նաև շատերի համար լայն հնարավորություններ ստեղծվեցին Արցախյան գոյապայքարում որպես լրագրող, գրող, բանաստեղծ՝ իրենց բարձր դրսևորել, և դրա օրինակները կան: Անուններ չտանք, բայց որ որոշակի առաջընթաց նկատվեց, որոշակի նվաճումների հասան գրողները, դա իրականություն է, և այդ փաստը պիտի արձանագրել: Մարդիկ գրում էին իրենց լավագույն ստեղծագործությունները, հետագա տարիներին պետք է այդ ամենը փիլիսոփայական խորք ունենար, ինչը հասկանալի էր դժբախտաբար: Սեր Շարտունը այսօր և հետագա տարիներին կարիք ունի նոր մտեցման, նոր գնահատման, նոր խորքերի բացահայտման:

- Դուք թերևս այն երջանիկ մարդկանցից եք, ով քաղել է իր պայքարի պտուղները: Նկատի ու-

նեմ այն, որ սկսած նախորդ դարի 60-ական թվականներից, Դուք Արցախյան գոյապայքարի առաջամարտիկներից եք եղել ու մեծ ներդրում եք ունեցել Շարժման մեջ: Համարո՞ւմ եք դա Ձեր կյանքի գլխավոր գործը:

- Ես, ճիշտն ասած, այս հարցին մի շարք անգամներ անդրադարձել եմ: Իրոք, ես ինձ երջանիկ եմ զգում, որ վերապրեցի 88-ի պայքարը: Բայց ուրիշ բան է պայքարը, ուրիշ բան՝ պայքարի հետևանքները: Հետևանքների առումով ասեմ, որ մեք ավելի շատ ակնկալիքներ ունեինք: Բայց կարևորն այն է այսօր, որ հասել ենք գլխավորին՝ ձեռք ենք բերել ազատություն, անկախություն և պետականություն: Դա մեր մեծագույն նվաճումն է: Այո, կարող եմ ասել, որ Արցախյան շարժումն իմ գլխավոր նպատակն էր, և այդ նպատակին հասել եմ ոչ միայն ես, այլև մեր ամբողջ ժողովուրդը:

Ես անտիպ գիրք ունեմ, որ կոչվում է «Հեռացող երկրի կարոտը»: Հուսանք, որ այս տարի ընթերցողը կունենա այն: Գիրքն այն մասին է, թե ինչպես Դարաբաղը ազատագրեցինք, սակայն դարաբաղցին լքում է Դարաբաղը: Այդ հարցը գնալով ուժգնանում է. գյուղերը դատարկվում են, մարդիկ, որ արյուն են թափել այս հողի համար, կամավոր թողնում հեռանում են: Ահա այս հարցերն են, որ պետք է մտահոգեն և՛ պետական գործչին, և՛ գյուղացուն, և՛ մտավորականին: Իմ այդ գրքում ես մտահոգություն եմ արտահայտել, որ կարող է մի օր Դարաբաղը լինի, բայց դարաբաղցին չլինի, Դարաբաղը մնա որպես զուտ աշխարհագրական անվանում: Այս մտահոգությունն իմ այդ գրքի գլխավոր մոտիվն է, և կարծում եմ՝ դա պետք է մտահոգի անխտիր բոլորին:

- Լրագրողական մի հանդիպման ժամանակ Դուք այսպիսի միտք ասացիք, որ ժամանակը չի ներելու մեզ, քանի որ մեր առաջընթացին խոչընդոտող երևույթների անտեսման լուռ վկաներն ենք:

- Ես այդ միտքը հիմա էլ կարող եմ հաստատել: Գրավոր խոսքը իմ և թո՛մ մասնագիտությունն է: Մեք լրագրողներ ենք, բայց արդյո՞ք մենք բավականին հետևողական ենք, մեր հողվածները բավականին հազեցած են այս տագնապներով, և ընդհանրապես, հնարավոր է այս տագնապները լսելի դարձնել ընթերցողին, հեռուստադիտողին, ռադիոլսողին, մեր պետական այրերին: Վախենամ թե բացասական լինի պատասխանը: Ես մի այսպիսի միտք էլ եմ ասել և նորից կրկնեմ: Իրոք, Ստեփանակերտը վերափոխվում է, գեղեցկանում, բայց դա ինձ չի ուրախացնում, քանզի այդ նորակառույց գեղեցիկ շենքերի բնակիչների մի զգալի մասը գյուղից եկածներն են: Մենք գյուղի ազգ ենք, մեր գոյության գլխավոր պայմանը հայ գյուղն է, և մեր ազգային մենթալիտետը փոխելը շատ վտանգավոր է: Վտանգավոր է՝ իր հետևանքներով:

- Ձեզ Դարաբաղի գրողական և լրագրողական շրջանակներում անվանում են Նահապետ: Համաձայն եք այս բնորոշմանը:

- Դրանք էպիտետներ են, որոնք գալիս են իմ նկատմամբ ունեցած որոշակի վերաբերմունքից և՛ ոչ ավելին:

- Կա տեսակետ, որ արձակը ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում որոշ հետընթաց է ապրում, և հատկապես երիտասարդ արձակագիրների շրջանում այլևս չկան լուրջ հայտ ունեցող գրողներ: Եթե դա իրոք այդպես է, ինչո՞վ կբացատրեիք նման վիճակը:

- Ժամանակակից հայ արձակագրության մասին ես որոշակի բան ասել չեմ կարող այն պարզ պատճառով, որ քիչ եմ ծանոթ ժամանակակից հեղինակների գործերին: Այն, ինչին որ ծանոթ եմ, ինձ բավարարել չի կարող: Պատճառները տարբեր են:

Այսպիսի օրինակներ բերեմ: Պերիկլեսի ժամանակաշրջանում հանճարների պոթնություն կար, իրար կողքի ապրում էին Սոֆոկլեսը, Էսքիլեսը, Ֆիդիպսը... Համաշխարհային մշակույթի գլուխգործոցներ են ստեղծվել Պերիկլեսի իշխանության ժամանակ՝ 25-30 տարվա ընթացքում: Այս երևույթն ինչպե՞ս բացատրել. թերևս մի պարզ մեկնաբանություն՝ որովհետև նա փիլիսոփա մարդ է եղել և իրեն շրջապատել է նշանավոր մարդկանցով:

Բայց մեկ ուրիշ օրինակ էլ բերեմ հայ գրականությունից: Իրար կողք կողքի ապրել են Չարենցը, հետագայում՝ Պ. Սևակը, Զ. Սահյանը, Վ. Դավթյանը, Զ. Հովհաննիսյանը, Ս. Կապուտիկյանը, Շիրազը, մեր գրականության հսկաները: Գեներտիկ ի՞նչ հրամանով են նրանք իրար կողքի ծնվել: Իհարկե, էպիտայի դերը շատ մեծ է, հասարակական կյանքի պայմանները շատ կարևոր են, բայց գրականությունը, արվեստը նաև անբացատրելի դրսևորումներ ունեն: Շատ լավ է, որ Չարենցից հետո Պ. Սևակ ծնվեց, Զ. Սահյան ծնվեց, բայց դա ինչպե՞ս բացատրել, հասարակական կացութաձևով, թե՞ ուղղակի հայ արգանդի բերունությունը:

Դժվար է այդ ամենը ենթարկել որոշակի տրամաբանության: Պ. Սևակը կամ մյուսները դժվարագույն հասարակական պայմաններում են ստեղծագործել, իսկ ահա ժամանակակից բանաստեղծների ստեղծագործական պայմանները բոլորովին այլ են. ազատություն ինչքան ուզե՞ս՝ կա, չկա, սակայն, ստեղծագործական այն որակը: Երկի ազգն էլ կուտակումների ժամանակաշրջան է ապրում, և երկի մենք հիմա այդպիսի կուտակումների շրջան ենք ապրում: Ես հավատում եմ, որ հետագայում կլինեն հեղինակներ, ովքեր իրենց ստեղծագործություններում լրիվությամբ կբացահայտեն Արցախյան շարժումը: Ինչպե՞ս եղավ, որ մի բուռ ժողովուրդ կարողացավ դիմակայել թշնամու հսկայական ուժին: Վերջերս մի գիրք ենք իրատարակել՝ «Քարին տակ»: Քարին տակի պաշտպանների խոսքն եմ տպագրել: Շշմելու բան է՝ մի բուռ հայ մարդիկ ո՞նց են կարողացել եղ սելավի առաջն առնել:

- Ի՞նչ եք կարծում, հիմա գիրք կարդո՞ւմ են, թե՞ ոչ: Գերակայող տեսակետն այն է, որ ընթերցողա-

կան լատարանը նվազել է:

- Գուցե ես հեռացող սերնդի տագնապներն եմ հայտնում, բայց հիմա նոր տեխնոլոգիաներ են եկել, պահանջները փոխվել են, սակայն ես շարունակում եմ մնալ այն կարծիքին, որ գեղարվեստական հաճույքը կարելի է ստանալ առաջին հերթին ընթերցանության միջոցով:

- Բարձրարվեստ գրականության մի կարևոր առաքելությունն էլ կայանում է մատաղ սերնդին ճիշտ դաստիարակելու մեջ: Գտնո՞ւմ եք, որ Արցախի հանրակրթարաններում հայ գրականության այս առաքելությունը լիարժեք դրսևորվում է:

- Դժվար է պատասխանել: Իմ թռուկից 5-րդ դասարանում է սովորում, անընդհատ հարցնում է հոմանիշներ, համաճանաչում: Դա նշանակում է, որ այդ գրքերում նման պահանջներ են ներկայացվում: Ինձ ուրախացնում է դա, իսկ թե լիարժեք կրթություն ստանում են, թե ոչ, դժվարանում եմ պատասխանել, ուղղակի տեղյակ չեմ:

- Ձեր երկարամյա աշխատանքային գործունեության ընթացքում պատասխանատու պաշտոններ եք վարել և ռադիոյում, և՛ հեռուստատեսությունում, և՛ տպագիր մամուլում: Առնվազն երկու լրագրողական սերունդ Ձեր «չինելից է դուրս եկել»: Ընդունո՞ւմ եք այդ ձևակերպումը:

- Ճիշտն ասած, բառի նկատմամբ ազատ զգալը գուցե լավ է: Հիմա հողվածներ ենք կարդում կամ հեռուստատեսություններ դիտում, բայց, այնուամենայնիվ, պակասում է խոսքի նկատմամբ հեղինակի պատասխանատվությունը: Պետք է հարգել թո՛ իսկ ընտրած մասնագիտությունը, հարգել ընթերցողի կարծիքը, ընթերցողի վերաբերմունքը: Այ, այս փոխարարբերությունն է երկի խախտվել:

Լավ է, երբ իրենց ազատ են զգում երիտասարդ լրագրողները: Բայց միևնույն ժամանակ՝ ազատ են զգում ոչ միայն նրա համար, որ այդ հնարավորությունը կա, այլ նաև՝ չգիտեն, որ չգիտեն: Սխալ զգացում, սխալ բնութագրություն, սխալ գնահատական, սխալ մոտեցում. այս «նախապաշարունակները» նրանք չունեն: Եվ դրա համար էլ հաճախ լսում ես ու ավստոսում, որ չի կարելի խնդրին մոտենալ այդքան թեթև: Տպագիր խոսքը գորավոր մտ է, և պետք է այն գնահատել ու մատուցել հավուր պատշաճի:

Խորհրդային տարիներին, երբ հողված էր տպագրվում թերթում, անպայման դառնում էր քննարկման առարկա տվյալ կուլեկտիվում, ընդ որում, այն մարդկանց ներկայությամբ, ովքեր զանցանք են կատարել: Իսկ հիմա՝ ինչքան ուզում ես քննադատիր, ռեակցիա չկա, վերաբերմունք չկա: Սա քննդատությունը մերժելու շատ դյուրին ձև է:

- Կայացե՞լ է այսօր Արցախի լրատվադաշտը, թե՞ դեռևս երկար ճանապարհ ունենք անցնելու: Ձեր համառոտ գնահատականը:

- Լրատվադաշտի մասին կարող եմ ասել հետևյալը: Նախ, թո՛ խոսքը հասարակական պահանջարկ պիտի ունենա: Ու նաև հնարավորություն պետք է ունենաս այդ խոսքը իր խորությամբ ներկայացնել: Ու

նաև հետևողական լինել, քաղաքացիական քաջություն ունենալ մինչև վերջ տանել թո՛ պայքարը: Ես կարող եմ մի օրինակ բերել խորհրդային մամուլի պատմությունից: Մարիետա Շահինյանը ակնարկ էր գրել Նիժնի Տազիլ քաղաքում կառուցվող հսկա գործարանի մասին: Այդ հողվածից հետո շինարարությունը կանգնեցվեց, որովհետև սխալ էր պլանավորված: Խոսքի, մամուլի ուժն ինչքան մեծ էր այն տարիներին:

Թեպետ Դարաբաղի պայմանները շատ ավելի տարբերվում էին ընդհանուր խորհրդային պայմաններից (ազգային խտրականություն և այլն), բայց, այնուամենայնիվ, երբ «Խորհրդային Դարաբաղ»-ը քննադատում էր որևէ կոլտնտեսության նախագահի, դառնում էր հասարակական քննարկման նյութ: Եվ նա պատասխանատու էր կուսակցական, խորհրդային մարմինների առաջ: Այս բանը հիմա չկա: Ճիշտն այն է, որ լսեն մամուլին, որովհետև մամուլը պետության ակամոջն ու աչքն է: Պետք է միշտ ինչել, որ մամուլի բերած օգուտն անչափելի է, ու պիտի գնահատվի լրագրողի կատարած աշխատանքը:

- Հետահայաց գնահատելով Ձեր անցած ուղին՝ ինչի՞ համար եք ավստոսում: Ի՞նչ երազանքներ եք փայփայել երբևէ, որոնք այդպես էլ իրականություն չհարձան:

- Ինձ համար ամենացավոտ հարցն է: Դժվար է թո՛ երազները չափել իրականության հետ: Ժամանակի ընթացքում թո՛ երազը մի ուղղությամբ է գնում, իրական կյանքը՝ մի այլ ուղղությամբ: Մարդու կյանքը դժվար բացատրելի երևույթ է: Ինչին ես հասել եմ, հասել եմ ուշացումով: Միշտ ուշացել եմ: Եվ ստեղծագործական, և՛ բոլոր առումներով:

- Գուցե ուշ լինի՞՞ նուշ լինի սկզբո՞ւնը և Ձեր պարագայում գործել:

- Դա բառախաղ է, որով կարելի է արդարացնել ուշացումը: Երկի շնորհի դրսևորման մի եղանակն էլ սա է: Վերջին 7-8 տարում ընթերցողին եմ ներկայացրել «Հոգնած երեկո» վիպակների և պատմվածքների ժողովածուն, «Չաստվածների խնջույքը»՝ երկու պրակով: Երրորդ պրակն արդեն երկու տարի է՝ պատրաստ է տպագրության: «Հեռացող երկրի կարոտը» վիպակների և պատմվածքների ժողովածուն էլ, հուսամ, այս տարի լույս կտեսնի: Արդեն պատրաստ, բայց չտպագրված էլի գործեր ունեմ, որոնք նույնպես երբևէ տպագրված տեսնելու ակնկալումն ունեմ...

- Արցախյան համար ապրած 80 տարին բնավ մեծ թիվ չէ: Հավատարմեք, որ Ձեր կյանքի հետագա տարիները կլինեն նույնքան բեղմնավոր, ինչքան՝ անցած ութ տասնամյակները:

Եվ թույլ տվեք առիթից օգտվելով՝ «Լուսարարի» խմբագրակազմի, մեր բազմահազար ընթերցողների անունից Ձեզ շնորհավորել հոբելյանի կապակցությամբ, մարտի ստեղծագործական նորանոր վերելքներ և երջանկություն:

Հարցազրույցը վարել է Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

ԾԱՆԵԱ ԶԲԵԶ

ՈՒՍՈՒՅՉԻ ԵՎ ՆՐԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ

Հնագույն ժամանակներից հայ մանկավարժական միտքը առաջնակարգ մշակակութային է...

թը մանկավարժական առաջնությունը հարցերից է: Այն ենթադրում է ուսուցման գործընթացի ճիշտ և արդյունավետ կազմակերպում:

Խոսելով ուսուցչի մասին՝ մեր մեծերը բազում դրական ու գերադրական ատկաններով են մեծարել նրան՝ գտնելով, որ նրա ձեռքում է մարդկության ապագան:

Մեր առաջին ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցը, բացելով հայագիր նոր դպրոցներ և կարգելով նոր ուսուցիչներ, պահանջում էր ինքն իրեն ճանաչելու կարևորությունը, որը նախադրում է ճանաչելու, իմանալու շրջապատը և աշակերտին, հետևապես, պետք է լինել գործունյա, պայքարել իր և մարդկության երջանկության, բարոյության համար, իսկ այդ ամենի իրագործման համար պետք են շնորհք, ունակություն, որն է՝ վարպետություն:

Մեսրոպատառ առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զհմաստուրիսն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», մեծ իմաստ և խորհուրդ է ուսուցչին, աշակերտին ու բոլոր նրանց, ովքեր ձգտում են ուսման, կրթության, դաստիարակության: Եվ հայ կյանքը երկար դարեր ղեկավարվել է այդ մեծախորհուրդ սկզբունքով: Սկզբունք, որ ուղեցույց է եղել դպրոցի, ուսուցչի և աշակերտի համար, բնության ու հասարակության օրենքներն ու օրինաչափությունները բացահայտելու, ճանաչելու, կողմնորոշվելու և կիրառելու միջոցները նշել:

Պարզ է, եթե ուսուցանող ուսուցիչը ղեկավարվել է այդ սկզբունքով, ապա անվերապահորեն նա պետք է վարպետանար դասավանդման մեջ: Այսօրվա բնորոշմամբ՝ ձեռք բերել մանկավարժական վարպետություն:

Մանկավարժական վարպետության դրույ-

թը մանկավարժական առաջնությունը հարցերից է: Այն ենթադրում է ուսուցման գործընթացի ճիշտ և արդյունավետ կազմակերպում: Հետևապես, հայ մանկավարժական միտքը չէր կարող այն շրջանցել և բազում անգամներ անդրադարձել է դրան յուրովի մեկնաբանումներով: Մանկավարժական վարպետությունը գործունակություն է, բայց խարսխվում է նաև հաստատության և հաստատունության վրա: Եվ իզուր չէ, որ մեծն Նարեկացին անընդհատվածություն է անվերջացնելիություն էր տեսնում գիտելիքների ձեռքբերման մեջ և մեծախորհուրդ ընդհանրացում՝ «Միշտ ուսանիմ, և երբեք ի գիտության ճշմարտության հասանեմ»:

Մանկավարժական վարպետության խնդիրները ճիշտ լուծում գտնելու և դրանք հաջողությամբ իրագործելու կարողությունը՝ մանկավարժական բարդ իրավիճակում:

Ուսուցչի մանկավարժական վարպետությունը դրսևորվում է նրա բազմապլան գործունեության բոլոր բնագավառներում, բայց առաջին հերթին և զվիճակում պետք է լինի նախապատրաստման, կազմակերպման և վարման գործում:

Պարզ է, եթե ուսուցանող ուսուցիչը ղեկավարվել է այդ սկզբունքով, ապա անվերապահորեն նա պետք է վարպետանար դասավանդման մեջ: Այսօրվա բնորոշմամբ՝ ձեռք բերել մանկավարժական վարպետություն:

Ուսուցչից պետք է վարպետորեն վարի ու կազմակերպի իր դասը, այն կառուցի մոլորակային մոդելով: Պարզ է, եթե ուսուցչի մանկավարժական վարպետությունը սկսվում է բուն դասապրոցեսից շատ առաջ: Լավ դասին վարպետ ուսուցիչը պատրաստվում է, ինչպես ասում են, իր ողջ կյանքի ընթացքում: Ուսուցչի մասնագիտական վարպետությունն ամենից առաջ դրսևորվում է իր դասընթացին, յուրաքանչյուր դասին՝ ըստ ամենայնի նախապատրաստվելու, դասի բովանդակությունը

պարզաբանող, մեկնաբանող, խոսքը՝ պատկերավոր, գրավիչ, օրինակներով հարուստ, նրա շարադրանքը պետք է շարժի աշակերտների միտքը, մտածողությունը, նրանց մղի ինքնուրույն մտածողությանը:

«Մանկավարժական վարպետությունը» համեմատաբար լայն հասկացություն է: Այն ներառում է ուսուցչի մանկավարժական տեխնիկան՝ որպես իր բաղադրիչներից ու նախադրյալներից մեկը: Ուսուցչի դաստիարակչական գործունեության վերլուծությունը թույլ է տալիս մեզ առանձնացնելու և դիտարկելու մանկավարժական վարպետության հետևյալ չափանիշները:

1. Ուսուցչի կողմից իր մանկավարժական գործունեությունը՝ որպես ուսումնադաստիարակչական բազմապիսի խնդիրների լուծման գործընթաց գիտակցելը:

2. Աշակերտի՝ որպես ուսուցման ու դաստիարակության պրոցեսի սուբյեկտի դիրքի իմաստավորումը:

3. Իր և իր սաների գործունեությունը՝ որպես տրամաբանորեն փոխկապված մանկավարժական խնդիրների լուծման պրոցես պլանավորելու կարողությունը:

4. Ուսումնադաստիարակչական խնդիրների ճիշտ լուծում գտնելու և դրանք հաջողությամբ իրագործելու կարողությունը՝ մանկավարժական բարդ իրավիճակում:

Ուսուցչի մանկավարժական վարպետությունը դրսևորվում է նրա բազմապլան գործունեության բոլոր բնագավառներում, բայց առաջին հերթին և զվիճակում պետք է լինի նախապատրաստման, կազմակերպման և վարման գործում:

Որն է ուսուցչի մանկավարժական վարպետությունը դասի ժամանակ: Դժվար է միանշանակ պատասխան տալ: Ուսուցչի մանկավարժական վարպետությունը սկսվում է բուն դասապրոցեսից շատ առաջ: Լավ դասին վարպետ ուսուցիչը պատրաստվում է, ինչպես ասում են, իր ողջ կյանքի ընթացքում: Ուսուցչի մասնագիտական վարպետությունն ամենից առաջ դրսևորվում է իր դասընթացին, յուրաքանչյուր դասին՝ ըստ ամենայնի նախապատրաստվելու, դասի բովանդակությունը

նախապես իմաստավորելու գերխնդիրը ճիշտ որոշելու մեջ: Ոչ վարպետ ուսուցիչները դասին նախապատրաստվում են սովորաբար սահմանափակվելով ինչ ուսուցանել և ինչպես ուսուցանել հարցերի պարզաբանմամբ, այսինքն՝ հետամուտ են սոսկ կրթական խնդրի: Մանկավարժական աշխատանքի հիմնական վարպետ ուսուցիչները սովորաբար դասին նախապատրաստվում են համակողմանիորեն: Վարպետ ուսուցիչներն աչքի են ընկնում ուսումնական նյութի հմուտ ընտրության, դասանյութի հստակ պլանավորման, իր և աշակերտների համատեղ գործունեությունը նախագծելու ունակություններով: Դասը ուսուցչի ընդհանուր մանկավարժական մշակույթի հարմար է, նրա ինտելեկտուալ հարստության չափանիշը, մտափորձի խորագիտակության իրական ցուցանիշը: Դասապրոցեսում իրենց արտացոլում են գտնում ուսուցման գործընթացի բովանդակությունը, սկզբունքները, միջոցները, մեթոդներն ու մեթոդական հնարները, ուսուցչի և սաների միջև ձևավորված հարաբերությունների ոճը, ուսուցանողի և գործունեության ամբողջական բնույթը:

Մանկավարժական գործընթացը բաղադրիչներն իրենց լիարժեք արտահայտությունն են գտնում միայն այն դասերին, որոնք դառնում են ուսուցչի մանկավարժական ստեղծագործություն, որոնցում ուսուցիչը հանդես է գալիս միաժամանակ որպես դասի թե՛ սցենարիստ, թե՛ ռեժիսոր և թե՛ կատարող: Ուսուցիչը կարող է հաջողությամբ կատարել իր այդ դերերը, եթե ունի ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման իր ոճը, մանկավարժական աշխատանքի իր ուրույն ձեռագիրը: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է իմանա, որ ամեն մի հայտնագործված մեթոդ միայն աստիճան է, որի վրա պետք է կանգնի առաջ ընթանալու համար... որի զարգացումն ու կատարելագործումը սահման չունի:

Լենուրա ԴԱՆԻԵԼՅԱՆ
Պարարայի միջև. դպրոցի ԿԱՉՊՏ,
Ֆիզիկայի ուսուցչուհի

ՆՈՐԻՑ՝ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՎԵՏ

Գալու է մի ժամանակ, երբ դու պիտի մարդիկ նաև Մեզ պեսներին երկրպագեն, Ոչ կուռքի պես, Ոչ էլ Աստու, Այլ... հերոսի...

Պ. Սևակ

Իր նուրբ ու խրոխտ, տառապազին ու լուսավոր, քնքուշ ու վսեմ բանաստեղծական սիրանքի, արդարության որոնման իր առաքելության, իր արածի խոր գիտակցումն ունեն Սևակը, երբ գրեց այս տողերը: Ծնվեց Սևակը՝ Արարատ լեռան հայացքի ներքո, վիթխարի կանթերի նման ճառագեց հայոց երկնակամարում, դարձավ իր ժողովրդի հավատարիմ զավակն ու ճշմարիտ բանաստեղծը: Նա աշխարհի չարն ու բարին քննեց այն մարդկանց դիրքերից, ովքեր «աշխարհն են շալակած տանում», հավատարիմ մնաց բանաստեղծի կերպարի իր իսկ բնորոշմանը՝ «Տիեզերական հրթիռի նման, Բոցը՝ դեպի ետ, Գլուխը՝ առաջ», և հասկացավ իր կոչումը:

տեղծ է, որից էլ սկիզբ է առնում նրա խոսքի ճշմարտությունը: Նրա պոեզիան միջինական ու թանկ գաղտնիքներով լեցուն երկար սպասված մանակ է, որը հազարավոր օրինակներով հասավ հասցեատիրոջը՝ վերածվելով հոգևոր կապի: «Կյանքով էլ, մահվամբ էլ հավատարիմ եղավ իրեն, իր կրթող, անհամբեր, անհագ, անկասելի բնավորությանը: Եղավ այնպես, ինչպես մայր բնությունն էր ստեղծել իրեն: Եվ կն-



քեց իր մահկանացուն, ինչպես իր խառնվածքը կանեցավ»:

Միջոցառման մասնակիցները՝ 7-րդ «գ» դասարանի աշակերտները, ներկայացրին գրողի բովանդակալից կյանքի էջերը, կյանք, որ ստեղծագործական այրում էր, անմնացորդ միջինում հարազատ ժողովրդի լուսավոր իղձերին: Ամբողջ դասարանը՝ 31-հոգանոց, երկշարք կանգնած, դասական սև-սպիտակ համդերձով, շնչում էր սևակյան պոեզիայով: Եվ ավելի ու ավելի առինքնող է դառնում մեծ բանաստեղծի կերպարը: Արդար ու ազնիվ մի շնչառություն խռովում է բոլորին՝ մեր հոգուն արթնացնելով այն մարդու կերպարը, որ կապի ի ներկա և գալիք սերունդների սրտերում: Մարդ, ով չէր բանդուրծում սուտը, ամարդարը, կեղծիքը և իր՝ համաստեղծի խոսքի հզորությամբ պայքարում էր այդ ամենի դեմ:

Աշակերտները հուզվեցին ու ինքնամոռաց ար-

տասանում են բանաստեղծություններ «Մարդը ափի մեջ» շարքից: Նորից լսում ենք «Ապրել» բանաստեղծությունը Ուրույն հափշտակությամբ, ինչպես լսել ենք առաջին անգամ:

Բանաստեղծն ուզում է ապրել, բայց ինչպե՞ս... Եվ աստիճանաբար բացում է ապրելու գաղտնիքը. ծուլվել ժողովրդին, տառապանքը կանգնել նրա տառապանքին, խնդալ ուրիշի խնդրով, լինել անանձնական:

Ապրել է, ապրել, այնպես ապրել, որ սուրբ հողը երբեք չզգա թո ավելորդ ծանրությունը:

Բանաստեղծի խոհերը հուզական են, շիկացած են զգացմունքները, նրա հոգու ալիքները մերթ խայտում են, մերթ ատում, մերթ ծիծաղում: Նա սիրում է, հավատում, վիճում, պահանջում, սերտանում, ստրակալում, գովերգում, խուսափում, հպարտանում և... վճռական բարձրաձայնում:

Խոստանում են Լինել ոչ թե հարկահավաքը, Այլ զավակը Դժվար դարի, Ինչպես նրան և ինքս ինձ Դավե՛տ մնալ հավատարիմ... ..Սհա և հայրենի զանգակատան դողանց-ները: Կոմիտասի տառապյալ կյանքը՝ որպես սիրո ու սիրահանգի անլուծելի զանգակատուն: Աշակերտներն արտասանում են «Ղողանք եղեռնական» հատվածը: Ցնցող է, սրտակեղեք, մռայլ: Բանաստեղծն իր հոգու մեջ ամփոփել է վշտից խոցոտված իր ժողովրդին, և նրա զգայուն հոգին բռնկվում է, հրդեհվում. ավերվել է մի շեն աշխարհ, մի ո՛րջ Դայաստան... ..Խոցեցին ու ջնջեցին, Դատեցին հաստ ու բարակ, Դոշտեցին ու տանջեցին, Փշեցին, տվին կրակ, Ողբեցին այրույն-արցունք, Ներկեցին ձոր ու բարձունք, Զանդեցին երկինք մի լուրթ, Մորթեցին մի ժողովուրդ, Դացառատ մի ողջ աշխարհ Սարքեցին փշրանք-նշխար, Սո՛ւրբ նշխար՝ շան բերանում... Նման դառն ու դաժան գույներից հետո

«Երբեմուհի-երևան» երգը հնչեց որպես վերածնված հայ ժողովրդի ամենազվարթ դողանք...

«...Երբ Սևակն է խոսում, մենք լռում ենք, քանզի Սևակը չի խոսում, որ լսենք, խոսում է, որ սովորենք: Սովորենք ապրել ճիշտ ու գեղեցիկ»,- այսպես սկսեց իր խոսքը դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանը: Հարունակելով խոսել Սևակի մասին թե՛ որպես մարդու և թե՛ որպես բանաստեղծի, նա ընդգծեց, որ մեծ բանաստեղծը կապված էր Արցախին: Նա միշտ այն մարդկանց շարքերում էր, ովքեր բարձրացրել են իրենց ձայնը՝ հանուն մեր երկրի անկախության:

Խորհրդային տարիներին բանաստեղծը երբեք անգամ այցելել է Արցախ: Սիրում էր մեր բարբառն ու մեր ժողովրդին: Փողոցում կանգնեցնում էր ցանկացած մարդու և ասում. «Մի՛ն դարաբաղերեն խոսե, սկանամ»: Դյուրընկալվում էր Բագրատ Ուլուբաբյանի տանը: Դյուրանց չէր գնում այն պատճառով, որ ցուցանակ աղբեղաներն էր գրված: «Դիմա Արցախի երեխաները Սևակ են արտասանում»,- ասաց Անահիտ Պողոսյանն ու իր խոսքը եզրափակեց «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծության արտասանությամբ:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն ժամնա Գրիգորյանը: Նա խոսեց Սևակի տուն-թանգարանի մասին: Դիացմունքով ու հնայիչ գույներով նկարագրեց նրա այգու գեղեցկությունը և մատաղ սերնդին հորդորեց այցելել մեծանուն բանաստեղծի տուն-թանգարան, ծաղիկ դնել տապանաքարին:

...Գիտեմ՝ Ես էլ եմ գնալու շուտով, Ուր որ է, այո, գնալու եմ ես, Բայց չեմ կորչելու: Դառնալու եմ ձեր... առողջությունը:

Այո՛, Պարույր Սևակը մեր ազգի առողջությունն է: Ամենի և նրա ամունը՝ այժմ և ընդմիշտ:

Ամեդա ԱՐԲՈՒՍՅԱՆ
Ստեփ. Ե. Չարենցի անվ.
հ. 7 հիմն. դպրոցի
հ. Լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ԱՐՑԱՆՅԱՆ ՇԱՐՇՈՒՄ-26

ՕՐԿԱ ԽՈՐՀՐԴԻ ՇՆՉՈՎ

Բերձորի երկրագիտական թանգարանը շրջանի մշակութային կարևոր օջախներից է, որտեղ գործում են պատկերասրահ, ցուցասրահ և Փառքի սրահ: Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցը թանգարանի հետ համատեղ փետրվարի 20-ին կազմակերպել էր միջոցառում՝ նվիրված Արցախյան շարժման 26-ամյակին: Թանգարանի փառքի սրահում, որտեղ պահպանվում են նյութեր նորոյա հերոսամարտի մասին, դպրոցի Լեոնիդ Ազգալոյանի անվան 7-րդ դասարանի աշակերտները դաստիարակ, պատմության ուսուցչուհի Կարինե Յուսիանի սրահում գլխավորությամբ ասմունքով, երգով, մեծերի ասույթներով ներկայացրին օրվա խորհուրդը: Ներկա էին դպրոցի տնօրեն Անահիտ Քոսակյանը, ուսուցիչներ, քաղաքային գրադարանի տնօրեն Սոնա Յուսիանը: Բարձր դասարանների (9-11-րդ) աշակերտները միջոցառմանը մասնակցում էին մասնակի: Թանգարանի տնօրեն Լիլիթա Յուսիանիայանը, ողջունելով ներկաներին, ասաց. «Հավաքվել ենք Փառքի սրահում՝ նշելու Արցախյան շարժման 26-ամյակը, Շարժում, որն ավելի երկար պատմություն ունի: Դեռևս 20-րդ դարասկզբին Արցախը բռնակցվեց Ադրբեջան կոչված հանրապետությանը, ու մեր ժողովուրդը չհամարակցվեց այդ իրողությանը, ընդ-

զեց, և դարավերջին ազատագրվեց մեր հայրենի երկրամասը»: Այնուհետև անդրադարձավ այն իրողությանը, որ հիմնականում մտավորականներն էին կանգնած ակունքներում, և նրանք էին ամենաշատը հավատում ու տուժում խորհրդային իշխանության կողմից: Կարևորեց կուն են Ազատամարտի մասնակիցների գործը՝ շենացնում են ազատագրված հայրենիքը: Նշեց այն անձանց անունները, ովքեր Արցախյան շարժման ակտիվիստներ են եղել, որոշները մասնակցել մարտական գործողություններին և այսօր շենացնում են ազատագրված Քաշաթաղը: Նախընտրված Մաթևոսյանը գեղեցիկ կատարեց «Հայեր, միացե՛ք» երգը. նրան ձայնակցում էր ողջ դասարանը: 4-րդ դասարանի աշակերտուհի Լիլիթ Ավագյանը հիանալի երգեց «Արցախ» երգը: Շարժման ընթացքի, մեր ժողովրդի, մտավորականների պայքարի ու մաքառումների մասին խոսեց նաև դասուհի Կարինե Յուսիանիայանը՝ անդրադարձնալով Գորբաչովի վերակառուցմանը, փետրվարյան ցույցերին, ուսանողական նստացույցին, ինչի արդյունքում Հայաստանի խորհրդային Հանրապետության Գերագույն խորհուրդը 1988թ. հունիսի 15-ին կայացրեց պատմական որոշումը՝ ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու մասին: Շրջվարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Հարութ Ավանեսյանը ողջունեց ձեռնարկը՝ ասելով՝ օրը խորհուրդ ունի, և կարևոր է այն, որ աշակերտներն են ձեռնարկի տերը: Միջոցառմանը



Շնորհավորանք

ԵՆԱԿԻ ՏՈՆ



Ուսուցիչ չեն դառնում, ուսուցիչ ծնվում են... Լեռների ու ծառաշատ անտառների գրկում բաբախում է Ննգու սիրտը: Դա նրա կիսաքանդ դպրոցն է: Այս դպրոցում դասավանդել են տեղացիներ, և կողքի գյուղերից ուսուցիչներ: Բայց դպրոցի ստեղծման և արարման գործում իր ուրույն տեղն ունի Նելլի Գրիգորյանը, մի անձնավորություն, որն արդեն իր կյանքի կետը նվիրել է դպրոցին: Փետրվարին բուրբուն է այն քառասուն երկար ու ծիգ տարիները, որոնք անց է կացրել Ննգու միջնակարգ դպրոցում և 20 տարին, որ նա այդ դպրոցի տնօրենն է: Այս փետրվարը նրա համար եռակի տոն է: Փետրվարի 23-ին լրանում է վաստակաշատ ուսուցչուհու 58 տարին: Ննգու միջնակարգ դպրոցի ողջ կուլեկտիվը շնորհավորում է Նելլի Գրիգորյանին՝ իր կյանքի եռակի տոնի կապակցությամբ, ցանկանում առողջություն, հաջողություն և բեղմնավոր աշխատանք:

Ննգու միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Ջոհրաբ ԸՆԸՈՅԱՆ

ԽՍԵ

ԴՐՍՈՒՄ ԶՄԵՌ Է, ԲԱՅՅՑ ԳԱՐՆԱՆ ՀՈՏ ԵՄ ԱՌՆՈՒՄ

Երկու օրից փետրվարի 20-ն է, իսկ ես գարնան հոտ եմ առնում: Քսանվեց տարի առաջ այս օրերին քաղաքը ձյունոտ էր ու ցուրտ, բայց մարդկանց մեջ կրակ էր վառվում, ու նրանք անչափ ջերմ էին միմյանց հանդեպ: Հիմա տաք է, արևոտ, բայց մրսում է հոգիս: Ինչի՞ց է, տարիքի՞ց, թե՞... Ինչևէ, ես կարոտով եմ հիշում այն օրերը, մարդաշատ հրապարակը, վեր պարզված բռնկումները, վառվող կրակօջախները, բաժանվող ուտեստը: Կարոտում եմ, այդ, կարոտում եմ այն անշահախնդիր, բոցավառ հայրենասիրությանը, որ բոլորի մեջ էր ու ամեն մեկիս մեջ: Դիտում եմ Ուկրաինայի Մայրանը և հիշում Ստեփանակերտը: Ինչքա՞ն տարբեր ենք՝ մեր կարգապահությունը, մեր օրինապաշտությունը, մեր հավատն ու հույսը: Իսկ Մայրանը, Մայրանը՝ ի՞նչ: Խառնաշփոթ է ու եղբայրասպանություն: Նրանց թշնամին իրենցից է, մերը մեկ օրում օտար դարձած «եղբայրական» ազգն է: Ազգ, որ հերթական անգամ թրջացավ, կոտորեց, թալանեց, բռնաբարեց, ռմբակոծեց ու հիմա զոհի դիմակ հագած՝ լացուկոծ է անում: Ինչ ասեն: Ասում են՝ հարևանը վատն է, տեղդ փոխիր: Ո՞ր մի հարևանից փախչենք: Մեր ճակատագիրն էլ դրանք են: Մեզ մնում է ապրել այստեղ, դիմանալ, հաղթել ու գոյատևել: Ծակատագրի բերումով փետրվարի 20-ին երևանում էի ու մասնակիցը այն հզոր ցույցի, որի առաջնորդներն էին Իգոր Մուրադյանը, Վաչե Սարուխանյանը, գրողներ Սերո Խանգադյանը, Սիլվա Կապուտիկյանը, Բագրատ Ուլուբաբյանը, Ժան Անդրյանը և ուրիշներ: Աչքիս առաջ ժան Անդրյանի դեմքից հոսող արցունքներն են, Սիլվա Կապուտիկյանի կոչը. - Ժողովուրդ, աչքներդ լույս, Դարաբաղի

ժողովրդին հաջողվեց ազատվել դավաճան հրեշից (Վարկովից), արտահայտել իր կամքը՝ որոշում ընդունելով վերամիավորվել Հայաստանի հետ: - Մի-ա-ցուն,- հորձանք տվեց բազմահազար ցուցարարը: Հպարտությունից պայթում էր սիրտս, շտապում էի վերադառնալ, բայց եղանակը թռչեցային չէր, և օդանավակայանում սպասում էի Ռուսաստանից եկած ու Արցախ թռչող ռուս պատվիրակության հետ: Պատվիրակները բարկացած էին երևում, ոչ մի կերպ չէր հաջողվում զրույցի բռնվել նրանց հետ: Խուսափում էին ու լռում: Երկու օրից եղանակը բացվեց, ու մենք թռանք Ստեփանակերտ: Ես տուն չմտա, իջա հրապարակում: Լեփ-լեցուն հրապարակից լցվեցի այնպիսի հպարտությամբ, որ ինձ թվում էր, թե այս ամենի հեղինակը ես եմ: Դա ինձ մոտ բնավորության գիծ է: Հիմա էլ, երբ ընկեր-հարևան որևէ բան է ձեռք բերում, ինձ թվում է, թե դա իմն է, և ուրախանում եմ ավելի շատ, քան տերը: Երկու օրից փետրվարի 20-ն է, և ես քսանվեց տարով ջահելացել եմ ու հիշում եմ այդ օրերը: Հիշում եմ խմբագրության պատի վրա

դրված ռադիոյից հնչող «Ամերիկայի ծայն»-ի հաղորդումը, երբ սփյուռքում հավաքված ցուցարարների հետ միասին վանկարկում էինք «միացում»: Հիշում եմ մեր նահապետին՝ ժողովրդական արտիստ Բենիկ Օվչյանին՝ նստած հրապարակի աստիճաններին: Հիշում եմ նրա վեր կարկառած ձեռքերը ու հեկեկոցից ցնցվող ուտերը: Նայեց ինձ ու ասաց. «Ձարթիր, լաո» երգիր, սիրելիս: Հիշում եմ Գալստյան ժամնայի բոցաշունչ խոսքերը, և նրա կերպավորած Ռուզանը դառնում է իրական ու շոշափելի: Հիշում եմ

«Կռունկ»-ի տղաներին, որոնց բերանից դուրս եկող յուրաքանչյուր խոսք դառնում էր ժողովրդի սեփականությունը, ու նրանք փսփսում էին իրար ականջի՝ գիտե՞ս ինչ է եղել: Ասում էին ու շշմում՝ նա-յիր հա՛, ամեն մեկի մոտ բերանը ջրամաս: Կասկածում էին այն մարդկանց, որոնք բռնկում էին քաղաքում, կասկածում էին նրանց, որոնք փորձում էին կրենի խաղերը մեկնաբանել: «Ինչպես թե՛» «Լեռին, պարտիա, Գորբաչով» լոզունգը սխալ է: Մխալը դու ես և դու պրովոկատոր ես»: Ասում էին ու քշում խեղճին: Ի՞նչ ժողովուրդ, սիրտս մրմռում էր փշրված հավատիդ համար, որի մի բեկորն էլ խոցեց ինձ Սունգայիթից հետո: Կորած ու փշրված հավատից ցավալի ի՞նչ կա կյանքում: Երկու օրից փետրվարի քսանն է, և հուշերը տանջում են ինձ... Այդ տանջանքը ինձ համար դառնում է հպարտություն, որովհետև ճակատագիրը սիրել է ինձ ու դարձրել ազգագրաբանի ականատեսն ու մասնակիցը, զարթոնքին հաջորդած պատերազմի, հաղթանակի ականատեսն ու մասնակիցը, վերածնված երկրի, նրա հաղթապայքարի ականատեսն ու մասնակիցը: Չէ, արժե ապրել: Ախր շատ ասելիք ու պատմելիք ունեն գալիք սերունդներին: Դրսում փետրվար է, ծնեռ, բայց գարնան հոտ եմ առնում:

Աննա ԱՅՎԱԶՅԱՆ



ԱՍԵՓԱՆԱԿԵՐՏ. 1988 Ձ. ՓԵՏՐՎԱՐ



ԳՐԱԴԱՐԱԿ

ՄԱՆԿԱՎԱՐԺ՝ ՄԻՇՏ ՇԱՐՔՈՒՄ

Ընդհանրապես, ուսուցիչը, որը տարիքի պատճառով այլևս դպրոցում չէ, մնում է ուսուցիչ: Երա մասին անցյալ ժամանակով չեն խոսում: Առավել ևս նա, ով իր կյանքի մնացած մասն էլ իմաստավորում է սերունդ կրթելու ու դաստիարակելու առաքելությամբ: Որպես հոգու պահանջ, ապրելու ձև:

20-րդ դարի արցախի լավագույն մանկավարժ Միքայել Բալյանը վաղուց մատյանը վերցրած դասարան չի մտնում: Ենթացում է ընդունված է ասել՝ անցել է վաստակած հանգստի: Եթե այդ «հանգիստը» պետք է հասկանալ բառի ամենաուղիղ իմաստով՝ օրվա մեծ մասն անցկացնել բազմոցի վրա՝ դա նրա համար չէ: Երան առավոտները կարելի է տեսնել աշխատանքի շտապողների շարքում: Բայց նրա զննած տեղն իր աշխատավայրը չէ: Կամ գրադարանն է, կամ թերթերի խմբագրությունը: Մտնում է գրադարան, օրվա թերթերը կարդում, հարկավոր գիրքը նորից աչքի անցկացնում կամ նոր լույս տեսած գրքերին ծանոթանում: Իսկ խմբագրություն՝ գրած հոդվածը հանձնելու, կամ պայմանավորվելու որևէ իրադարձության, երևույթի մասին արձագանքելու: Միայն այսպիսի կարգադրությունով ապրող՝ պատկառելի տարիքով մանկավարժը վերջերս ընթերցողի սեղանին դրեց իր երկրորդ՝ «Միշտ մեզ հետ են, մեր կողքին» գիրքը:

Եվ պարտադիր չէ, որ անպայման դա լինի մարտի դաշտում՝ թշնամու դեմ: Խաղաղ պայմաններում էլ՝ անհաշտություն թերությունների, իրենց գործը վատ կատարողների, կեղծիքի ու ստի դեմ: Դրա համար վաստակաշատ մանկավարժը թիրախ է ընտրել հենց կրթության բնագավառը՝ այն հաստատ հանդամսը, որ ուսուցչի ձեռքերում է ապագան: Նայած թե ինչ սերունդ կդաստիարակի, նույնպիսի հեռանկար էլ կսպասվի երկրին:

Գրքի առաջին մասում ամփոփված



են իր հայրենի գյուղի՝ Մեծ Թաղերի Զայրենական մեծ պատերազմում զոհվածների կամ մասնակիցների դիմանկարները: Խոստովանեմք, զնայով մոռացվող սերունդ, որի մասին միայն ընդհանրական տեղեկություն ունի աճող սերունդը: Ստեղծագործական շնորհքով և մտավոր լավ բազայով օժտված հեղինակը կարողացել է դրանք հետաքրքիր ներկայացնել: Երևում են և՛ այն ժամանակվա գյուղի կյանքի տարբեր կողմերը, և՛ նրանց ընտանիքները, և՛ ռազմաճակատային դրվագներ: Զարկավ, դա այդ ժամանակվա յուրօրինակ տարբերություն է: Այդ շարքը և ընդհանրապես, գիրքը բացվում է մեր ազգի երևելի գավակների մեկի մասին «Նա պարծանքն է մեր, մեր հպարտությունը» վերնագրով հոդվածով՝ նվիրված Սովետական Միության հերոս, ավիացիայի մարշալ, համագյուղացի Արմենակ Խանիբերյանցին, որի մարմարե կիսանդրին կանգնած է նրա

անունը կրող դպրոցի բակում: Կարդում են և համոզվում, որ իրոք, հայրենասիրությունը դատարկ տեղում չի ծնվում, մեր ժողովուրդը դրա համար ունեցել է հարուստ ակունքներ: Զեղինակը գրում է, որ միայն իրենց՝ Մեծ Թաղեր գյուղից Մեծ Զայրենականին մասնակցել են 540 հայրեր (այդ թվում՝ դուստրեր), որոնցից 283-ը տունդարձի ճանապարհ չեն տեսել: Ընտանիքներ են եղել, որ 5 զոհ են տվել, ոմանք՝ 4, ոմանք՝ 3: Զեղինակը զուգահեռ է անցկացնում Արցախյան գոյապայքարի հետ: Մեծթաղերցիներն իրենց պատվով ու փառքով են պակել նաև մեր պատերազմում: Գյուղը տվել է 45 զոհ, որից 33-ը՝ թեծ մարտերում: Զայրություններ է նշում, որ եթե 2-րդ աշխարհամարտում տվել են մարշալ Խանիբերյանց, զեներալ Ալեքսանդր Զուռունյան, ապա Արցախյան պատերազմում՝ զեներալ-լեյտենանտ Արթուր Աղաբեկյան, զնդապետ Գարիկ ժամհարյան ու էլի բարձրաստիճան սպաներ:

«Թաղերից հասել է Բեռլին» (ուսուցիչ՝ Սարո Գալստյան), «Զայլել է ռազմի ճանփաներով» (նշակույթի աշխատող՝ Լուսիկ ժամհարյան) և ուրիշ հետաքրքիր դիմանկարներով Մ. Բալյանը կերտել է Մեծ Զայրենականին մասնակցած համագյուղացիների կերպարները, որոնց համար հարկ է եղել օգտագործել ժամանակին նրանց հետ ունեցած զրույցները (եթե ետ են եկել ռազմաճակատից) կամ նրանց նամակները, որոնք պահվում են գյուղի թանգարանում՝ հարստացնելով Մեծ Թաղեր գյուղի պատմությունը, նոր սերունդի հայրենասիրական ոգու ակունքները ընդարձակելով: Եթե մանկավարժ Մ. Բալյանն այսօր չի կարողանում մտնել դասարան և իր գեղեցիկ, անաղարտ ու հյուսիսը հայրենով ներկայացնում Սասունցի Դավթին, Վարդան Մամիկոնյանին, Պարզ Սիբապետունուն և մեր մյուս հերոսներին, ապա նույնը են անուն է՝ գրավոր ներկայացնելով իրական հերոսներին: Ասել է թե՛ մանկավարժն այսօր էլ շարքում է և կատարում է իր առաքելությունը՝ մատաղ սերունդին ներարկելով հայրենի եզերքի նկատմամբ սիրո, նվիրվածության զգացում: Անշուշտ, հայրենիքը սիրում են նաև այն ճանաչելով, նրա հին ու նոր մարդկանց մասին իմանալով:

Կանգ չառնելով գրքի մյուս հատվածներին, որոնք ընդգրկում են Արցախյան պատերազմում զոհված կամ

անհայտ կորած քաջորդիների կամ Գոյապայքարին ակտիվ մասնակցած և այսօր խաղաղ աշխատանքում իրենց պարտականությունները կատարող մեր քաղաքացիների մասին ստեղծագործությունները, ասենք, որ հեղինակը միշտ գաղափարական մի լարի է խփում՝ հայրենի հողը քաղցր է ամեն ինչից, նրա գրկում մեռնելն էլ բախտավորություն է:

Գրքում տեղական հերոսներից բացի ներկայացված են ազգի նվիրյալներ Անդրանիկի ու Նժդեհի մասին պատմող նյութեր, որոնք մատուցված են շատ հետաքրքիր:

Մանկավարժ Բալյանն իր դիրքում չէր լինի, եթե լրագրողական ունակությունները չուղղեր նաև կրթական հիմնախնդիրներին: Իր կարծիքն է հայտնում, առաջարկություններ անում կատարվող բարեփոխումների վերաբերյալ: «Ես ո՞ր եմք գնում», «Ամեն ինչ գեղեցիկ է չափի մեջ», «Լավերի մեջ՝ լավագույնին», «Պետք է տեսնել ոչ միայն դասագիրքը», «Իսկ ո՞վ պիտի տեսնի» և այլ վերնագրերով հոդվածներում պատկերացնում ենք տարիներ առաջ այն Միքայել Բալյանին, որը մանկխորհրդում սուր ելույթներ էր ունենում՝ մատնացույց անելով այն ուսուցիչներին, ովքեր բավարարվում են բուհում ստացած գիտելիքներով, դասագրքի եղածով, չեն զբաղվում ինքնակրթությամբ՝ ասելով. «Ուսուցիչ մարդն իրավունք չունի հանգիստ նստելու: Նա միշտ պիտի լինի որոնումների, պրոպտունների մեջ, պիտի շատ կարդա, պիտի կարդա ամեն օր՝ միշտ հիշելով, որ սովորելը, նոր գիտելիքներ ձեռք բերելը չունեն վերջակետ, սահման ու հանգրվան»:

Վերջում հավելեմք, որ հեղինակը տարբեր հարցերի շուրջ իր նկատառումներն արտահայտել է նաև չափածո ձևով՝ մերթ որպես մանկական բանաստեղծություն, մերթ որպես առակ, մերթ որպես երգիծանք: Ցավոք, տեղ են գտել նաև տխուր շեշտադրումներով տողեր՝ կապված իր անձնական մեծ վշտի հետ: Գոյաճան ավարտենք հեղինակի իսկ խոսքերով, որ նա ասում է իր հերոսներից մեկին. «Համաձայնվեմք ու հաշտվեմք այն մտքի հետ, որ մարդ արարածը պիտի դիմակայի, հաղթահարի ամեն դժվարություն՝ ինչքան էլ այն ծանր ու անտանելի լինի»:

Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՖԻԶԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐ ՉԵՆՆԱՐԿ

2013թ. լույս է տեսել «Մուլեկուլային ֆիզիկա. Ջերմադինամիկա» գիրքը՝ Ալ.Գ. Ալեքսանյանի և Ա.Ժ. Խաչատրյանի համահեղինակությամբ: Այն և՛ համառոտ տեսություն է ֆիզիկայի նշված բաժինների վերաբերյալ, և՛ միաժամանակ տրված են խնդիրներ՝ լուծման օրինակներով և ինքնուրույն լուծման համար: Գրքին երկար են սպասել ոչ միայն ավագ դպրոցի աշակերտները, այլև մենք՝ ուսուցիչները:

Հայտնի է, որ երեխաները դժվարանում են հատկապես խնդիրներ լուծելու ժամանակ: Երբեմն աշակերտը մեկ-երկու քայլ անելուց հետո, եթե խնդրի լուծումը ձգձգվում է կամ չի ստացվում, մի կողմ է դնում այն, իսկ ձեռքի տակ ունենալով այս գիրքը, զգալիորեն հեշտանում է նրա աշխատանքը: Արդեն մի քանի ամիս է, առաջնորդվելով այս գրքով, ես նկատել եմ, որ այն դարձել է մեր աշակերտների սեղանի գիրք:

Ուզում եմ շնորհակալություն հայտնել գրքի հեղինակներին՝ ուսուցիչների և աշակերտների կողքին կանգնելու համար և ասել, որ մենք սպասում ենք ուսումնական նոր ձեռնարկների:

Քրիստինե ԳՐԻԳՈՐՅԱՆ Նորագյուղի Վ. Պետրոսյանի անվ. միջն. դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհի

Մարզական

Ստեփանակերտի հ.1 հիմնական դպրոցի մարզադահլիճում կայացան ԼՂՀ դպրոցականների 5-րդ սպարտակիադայի ծրագրով աղջիկների և տղաների միջև վոլեյբոլի համարայնական մրցումները:

Մասնակցում էին Ստեփանակերտի և բուրյ շրջանների հավաքական թիմերը:

Փետրվարի 3-7-ը նախ մրցեցին աղջիկների, ապա 10-14-ը՝ տղաների հավաքականները:

Ուրախությամբ կարելի է փաստել, որ գնալով վոլեյբոլ մարզաձևը մեծ մասսայականություն է վայելում դպրոցականների շրջանում, ինչի ապացույցը միտրող տարիների համեմատ թե՛ աղջիկների և թե՛ տղաների կողմից ցուցադրված ավելի լավ խաղերն էին:

Նման մրցումների կազմակերպումը նպատակ ունի բացահայտել համարպետության աղջիկների և տղաների հավաքականները համալրելու համար լավագույն մարզիկ

դպրոցականներին: Բացի դրանից, սկսած այս տարվանից, ԼՂՀ դպրոցականների սպարտակիադայի ծրագրով նախատեսված բոլոր մրցաձևերից հաղթող թիմերը կմասնակցեն ԶԶ դպրոցականների միջև անցկացվող մարզական խաղերի միջմարզային փուլին, իսկ այդ փուլում հաջողության հասնելու դեպքում՝ եզրափակիչ փուլին, որտեղ հաղթող թիմերը կմասնակցեն համաշխարհային մարզական խաղերին:

Հուլանք, որ մեր դպրոցականները պատվով կմասնակցեն այդ մրցումներին և բարձր կպահեն մեր համարպետության պատիվը:

Հանրապետական մրցումներում մասնակից ութ թիմերը մրցում էին վիճակահանության կազմված երկու ենթախմբերում, այնուհետև ըստ գրաված տեղերի միմյանց հետ հանդիպելով՝ որոշում էին վերջնական տեղերը:

Ծավալված համառ և անզիջում մրցակ-

ցության արդյունքներով մրցավարական հանձնախումբը որոշեց հաղթողների:

Աղջիկների մրցապայքարում մրցանակային տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ՝

1-ին տեղը գրավեց Ստեփանակերտ քաղաքի հավաքական թիմը, 2-րդ և 3-րդ տեղերը գրավեցին համապատասխանաբար՝ Ասկերանի և Հաղորթի շրջանների թիմերը: Տղաների մրցապայքարում մրցանակային տեղերը հավաքական թիմերի միջև բաշխվեցին հետևյալ կերպ. 1-ին տեղ՝ Հաղորթի շրջան, 2-րդ տեղ՝ Ասկերանի շրջան, 3-րդ տեղ՝ Մարտունու շրջան:

Մրցանակային տեղեր գրաված թիմերը պարզատրվեցին կրթության և գիտության նախարարության դիպլոմներով և հուշանվերներով, իսկ թիմերի բոլոր 10-ական անդամները՝ համապատասխան կարգի մեդալներով:

Ձեռքի ժամացույցներով և պատվոգրերով պարզատրվեցին լավագույն խաղացողներ

ճանաչված դպրոցականները, աղջիկներից՝ Մարիաննա Զաքարյանը (Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոց), իսկ տղաներից՝ Սպարտակ Խասապետյանը (Հաղորթի շրջանի Մեծ Թաղերի միջնակարգ դպրոց):

Պարզատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց ու հետագա անձնական ու մարզական հաջողություններ մաղթեց կրթության և գիտության փոխնախարար Մ. Համբարձումյանը:

Տղաների եզրափակիչ խաղերին ներկա էր ԼՂՀ տղաների վոլեյբոլի հավաքականի գլխավոր մարզիչ Վոլոդյա Ղահրամանյանը, ով վերջում շնորհավորելով հաղթողներին՝ ուրախությամբ նշեց, որ մեծ աճ է նկատում այսօրվա մրցող թիմերի տղաների խաղում:

Մուրադ ՇԱՀՐԱՄՆՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՍՐԱԳԻՐ
Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ
Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 25.02.2014թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: